

ՄԵՐ ԱՆԿԻՆԷՆ

«ՄԵԿԸ ԴՐԱ ՀԱՍԱՐ
 ՊԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՅ
 ԹԵ ՉԷ»

ՏՕԳՔ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Շատ յանախ տարօրինակիս կը բաղիսին պետական բարձրագոյն մակարդակի դեմքեր, որոնք ողջ միտ հասարակութիւնը բարեմիտի (չըսելու համար՝ ապուշի) տեղ դնելով, աշխարհով մէկ ծանօթիւնը գործած մեղքերուն համար, հրապարակաւ կը մեղադրեն նոյնպէս բարձր դիրքի վրայ գտնուող գործակիցները: Վերջին հաշուով պետական համակարգը չէ՞ պատասխանատուն՝ երբ գործուած յանցանքները արդէն իսկ տարիներու հնուքիւն ունին, առօրեայ սովորութիւններու շարք անցած են:

Նման կացութեան մատուցեցայ, երբ գարմանով, մամուլի էջերուն մէջ կարդացի ՀՀ Նախագահ՝ Պր. Սերժ Սարգսիսեանի կատարած մեղադրանքներն ու կշտամբանքները՝ շեշտակիօրէն ուղղուած երկրի վարչապետ Տիգրան Սարգսիսեանին եւ անոր գլխաւորած նախարարական խորհուրդի անդամներուն, նախարարական խորհուրդի հետ ունեցած խորհրդակցական խառն ճիւղերու, որ տեղի ունեցած է ընթացիկ ամսուան 15-ին:

Սարգսիսեան աննախադէպ բնադատութեան ու կշտամբանքի ենթարկած է խորհուրդի անդամները, պետական համակարգէն ներս գոյութիւն ունեցող ապակառուցման երեսնամեայ կապակցութեամբ:

Ան դիտել տուած է, թէ՛ խորհուրդի անդամները պետութեան պիտուէի հաշույն անձնակազմը նուազեցնելու գնումներ կը կատարեն:

Թէ՛ պետական մարմինները ծանօթ-բարեկամներով պետութեան հաշույն շուկայական արժէքներէն բարձր գնումներ կը կատարեն իրենց հաշույն նիւթակազմի իւրացումներ ապահովելով:

Թէ՛ ինչպէս պիտի բնութագրէր նոյնիման Պրն. Նախագահը - ... ովքեր իրենց բնու տղային են բերում տեղեկութիւն (հասկնալ՝ անուրդներուն) յաղթեցնում կրկնակի բարձր գներով: Տարօրինակ է, մեծ տեղեկութիւններով ապրանքներ ձեռք բերում, որ շուկայում աւելի է ժան է»:

Ապա, իր խօսքը մասնաւորելով վարչապետին, Պրն. Նախագահը կը բանաձեւէ իր կշտամբանքը. - Տիգրան, շա՛տ բացասական եմ գնահատում, շա՛տ բացասական:

Երեսուրկապէս դրական համարուող նախարարական խորհուրդէն ներս գործող վարչապետին հասցէագրուած նախագահական բնադատութիւնները, շուտով, հիմնովին ձախող բեմադրու-

Շաբ.ը էջ 18

ՍՓԻՌՔԱՅԱՅ ՆԵՐԴՐՈՂՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍԸ ԿԸ ՍԵՂԱԴՐԷ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒՆ

Հայաստանի մէջ նոր ստեղծուած Սփիւռքահայ ներդրողներու պաշտպանութեան հիմնադրամի ներկայացուցիչները՝ փաստաբաններ Նիկոլայ Բաղդասարեան եւ Լեւոնիկ Յովհաննիսեան լրագրողներու հետ հանդիպման ընթացքին յայտարարեցին, թէ Հայաստանի մէջ կը գործէ բարձրատիճան պաշտօնեաներու խումբ մը, որ կը կողոպտէ օտարերկրեացի սփիւռքահայ ներդրողներուն:

Փաստաբանները յայտնեցին, թէ իրենց ձեռքերուն մէջ են նման մի քանի գործեր, երբ օտարերկրեացի ներդրողներու իրաւունքները Հայաստանի մէջ խախտուած են եւ այդ մարդիկ կրած են նիւթական լուրջ վնասներ: Փաստաբանները դիմած են իրաւապահ մարմիններուն, սակայն ամիսներ, որոշ պարագաներուն նաեւ տարիներ անցած են, բայց գործը տեղէն չէ շարժած: Անոնք պնդեցին, որ Հայաստանի պատկան մարմինները, մասնաւորապէս Գլխաւոր դատախազութիւնը եւ Պետական Եկամտաւերու կոմիտէն, հակառակ բազմաթիւ բողոքներուն, պատշաճ քայլեր չեն ձեռնարկել մեղաւորներուն պատժելու համար, քանի որ պաշտօնեաներու վերոյիշեալ խումբը բաւականին ազդեցիկ է Հայաստանի պետական համակարգին ներս եւ բացի այդ, անոնք ունին «էլ ակելի ազդեցիկ հովանաւորներ»:

«Մենք ունենք Սեփականութեան, տնտեսական գործունէութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների գործերով վարչութիւն: Ապրիլ ամսից ներկայացուած է դիմում, ընդհուպ մինչեւ

արտերկրից զանգել ինձ են սպառնացել, որպէս փաստաբան իմ գործունէութեան հետ կապուած: Ես համապատասխան դիմում եմ ներկայացրել: Առ այսօր թղթերը դրուած են մի կողմ: Սա վերաբերում է «Սիգարոն» ՍՊԸ-ին», - ըսաւ Լեւոնիկ Յովհաննիսեանը, - «Դա էլ օտարերկրեացի ներդրումների վրայ հիմնուած ընկերութիւն է եւ 2004 թուականին այդ ընկերութիւնը ծաղկում էր, 350 աշխատատեղ ունէր, 50 երկիր արտահանում էր կատարում, բայց տնտեսական յանցագործութիւն կատարող անձանց այդ նոյն շղթայով այսօրուայ դրութեամբ այդ ընկերութիւնը փաստացի անվճարուողակ է եւ արդէն ՊԵԿ-ը դիմել է անանկութեան համար»:

Թէ որոնք են այդ բարձրատիճան պաշտօնեաները, փաստաբանները անուններ չհրատարակեցին, սակայն նշեցին այլ օրինակներ:

«Մենք մասնակցում էինք «Տէնօ Կոլդ Մայնինկ» ընկերութեան գործին, որտեղ կատարուել են մեծ իւրացումներ: 1.5 միլիոն դոլարի յափշտակութիւն է տեղի ունեցել այնտեղ՝ խորովակներ են գողացել, հանել են՝ Պարսկաստան վաճառել են», - տեղեկացուց փաստաբան Նիկոլայ Բաղդասարեանը: Ներկայացուցեց նաեւ ամերիկահայ ներդրող էստոնիա խուտեանի յայտնի գործը: Ան սփիւռքահայերէն դրամական միջոցներ հաւաքելով Երեւանի Մաշտոցի պողոտային վրայ 2005 թուական

Շաբ.ը էջ 4

ԷՊԻԲԱՐԴՆԱԼԲԱՆԴԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ



Էդուարդ Նալբանդեան ելոյթ կ'ունենայ Լոս Անճելըսի մէջ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան կարճատեւ այցելութեամբ գտնուեցաւ Լոս Անճելըս: Սեպտեմբեր 24-ին ան Հայաստանի արտաքին քաղաքականութեան վերաբերեալ ելոյթ ունեցաւ Լոս Անճելըսի «Համաշխարհային Խնդիրներու Խորհուրդ» քաղաքագիտական կեդրոնէն ներս:

Իր ելոյթին մէջ Նալբանդեան անդրադարձաւ Հայաստանի արտաքին քաղաքականութեան գլխաւոր ուղղութիւններուն, հայ-ամերիկեան յարաբերութիւններուն եւ Հարաւային Կովկասի իրավիճակին:

Սեպտեմբեր 25-ին Էդուարդ Նալբանդեան Լոս Անճելըսի ՀՀ Հիւպատոսարանէն ներս հանդիպում ունեցել Միացեալ Նահանգներու արեւմտեան ափի հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու հետ, որոնց հանգամանօրէն ներկայացուց Հայաստանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւնները:

Ս.Դ.Հ.Կ. 125 ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԹ ԶԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅԹԻՆ ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԹԱԴԵՆՍ ՔԵՕՐՕՂԵԱՆ ՆՈՒԻՐԵՑԻՆ 10,000 ՏՈԼԱՐ

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Հիմնադրութեան 125 ամեակի հանդիսութեանց ծիրէն ներս, անցեալ Շաբթ, Սեպտեմբերի 22-ին տեղի ունեցաւ յիշատակելի եւ անմոռաց ճաշկերոյթ-պարահանդէս եւ ազգային երգերու երեկոյ մը Պըրպէնքի «Ամպրոպիա» սրահին մէջ:

Բազմահարիւր ներկաներուն մէջ կը նշմարուէին Արեւմտեան Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ներկայացուցիչ Հոգշ. Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամներ ընկերներ՝ Տօքթ. Եղիկ ձէրէճեան Գրիգոր Խոտանեան, Տօքթ. Համբրիկ Սարաֆեան եւ Վազգէն Գալթագճեան իրենց տիկիններով: Ինչպէս նաեւ Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի ենթակառուցներու պատասխանատուներ եւ տարբեր շրջաններէ ժամանած հիւրեր:

Տօնական տեսք ստացած սե-



Ընկ. Վազգէն խոտանեան «Պատուոյ Գիր»-յուշատախտակը կը յանձնէ Տէր Եւ Տիկին Թադէոս Քէօրօղլեաններուն

ղաններուն վրայ ակներեւ էին ՍԴՀԿ-ի 125 ամեակի պիտակը կրող զինի շիշերը:

Թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ներկա-

յացուցիչ Հոգշ. Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան, սեղաններու օրհնութեանէն առաջ բեմ բարձրանալով

Շաբ.ը էջ 5

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՉԳԱԼ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

ՅԱԿՈՐԱԲԱՆԱԼԵԱՆ

Վերջին մի քանի ամիսների ընթացքում Հայաստանում տեղի ունեցող ներքաղաքական զարգացումների հետաքրքրական գծերից մեկն էլ այն էր, որ արձանագրուեց այսպես ասած արեւմտամէտ քաղաքական բեւեռի ուղուղաձիգի միտում: Աւելի ու աւելի ռուսափրկացող Հայ ազգային կոնգրէսից պոկուեց, իսկ որոշ ժամանակ անց էլ ակնյայտօրէն այդ դաշտում գործող «Ժառանգութեան» հետ դաշինք կազմեց Ազատ դեմոկրատներ կուսակցութիւնը: Յետոյ Հայ ազգային կոնգրէսից անջատուեց Հանրապետութիւն կուսակցութիւնը, որի առաջնորդ Արամ Զաւէնի Սարգսեանը բացայայտ հանդէս է եկել արեւմտեան կողմնորոշման օգտին: Կոնգրէսից տարանջատուեց նաեւ Յովհաննէս Յովհաննիսեանի կուսակցութեամբ, ով եւս ակնհերեւ արեւմտամէտ ուժերի շարքից է: Կոնգրէսից դուրս եկաւ այդպիսի համարում ունեցող Դաւիթ Շահնազարեանը:

Արժէ, ի դէպ, անդրադառնալ արեւմտամէտ-ռուսամէտ հասկացութիւնների վերաբերեալ յաճախ հնչող իմաստնալից մեկնաբանութիւններին: Շատ պատուախնդիր մարդիկ ժամանակ առ ժամանակ հարկ են համարում տարբեր հարթակներում խօսել այն մասին, որ չի կարելի լինել արեւմտամէտ կամ ռուսամէտ, այլ պէտք է լինել Հայամէտ կամ հայաստանամէտ: Դա իհարկէ արժէքաւոր դիտարկում է: Իհարկէ, որեւէ արեւմտեան կամ ռուսական կողմնորոշում, պէտք է բխի բացառապէս Հայաստանի շահից: Եթէ ոեւէ մէկը Հայաստանի ապագան տեսնում է արեւմտեան ծիրում, ապա դա իհարկէ պէտք է պայմանաւորուած լինի նրանով, որ այդ ծիրում իր համար նկատելի են պետութեան անվտանգութեան, զարգացման, քաղաքացիների պաշտպանութեան առաւել գործուն արժէքներ, մեխանիզմներ, գործիքներ: Ընդ որում, լինել արեւմտամէտ՝ այդ նկատառումով, ամենեւին չի նշանակում լինել ռուսաստանաստեաց, եւ հակառակը՝ լինել ռուսամէտ, չպէտք է ենթադրի լինել արեւմտաստեաց:

Բայց, ի հարկէ, կան անձինք եւ խմբեր, որ այդ ամէնը հենց դիտարկում են սիրոյ, համակրանքի, ատելութեան կամ հակակրանքի դաշտում: Սակայն, դա ինքնին այդ անձանց ինդիւիդուալ արդէն, իսկ հրապարակային հասարակական-քաղաքական դիսկուրսում թերեւս պէտք է պարբերաբար, պերմանենտ կերպով հասնել պարզունակութեան մի մակարդակի, երբ ամէն երկրորդ նախադասութիւնից յետոյ անհրաժեշտ է շեշտել, որ այս ամէնը ոչ թէ ինչ որ մետութիւն է, այլ Հայաստանի շահից բխող դիրքորոշում:

Դա ի միջի այլոց:

Ինչ վերաբերում է ներքաղաքական գործընթացներին, ապա արեւմտեան բեւեռի ձեւաւորումն անշուշտ կարեւոր հանգամանք է մինչեւ ուղն ու ծուծը ռուսեղէն Հայաստանի քաղաքական դաշտի պարագայում: Այդ դէպքում, եթէ անգամ ունենում ենք հակառակ ծայրայեղութեան հեռանկար, ապա միեւնոյն է, դա կարեւոր է դաշտն առնուազն որոշակի հաւասարակշռուածութեան բերելու, կամ

առնուազն այլընտրանքը որոշակիօրէն, գոնէ հասկացութիւններ ի արտաքին իմաստի առումով դրսեւորելու համար:

Դրան կը յաջորդի արդէն բովանդակութեան խնդիրը, եւ գուցէ երկու բեւեռների միջեւ մրցակցութիւնը յաջորդ փուլով արդէն կը սկսի սպասարկել այդ խնդիրը:

Բայց, ըստ էութեան, դա ամենեւին չի նշանակում, որ նոր ձեւաւորող բեւեռը կարող է բովանդակային, խորքային, քաղաքակրթական այլընտրանքի հարցը արխայինաբար թողնել յաջորդ փուլին, բաւարարելով ներկայում անուանական գոյութեամբ: Դա, ի դէպ, կարող է լինել սեփական քաղաքական առաքելութեան հանդէպ անպատասխանատու վերաբերմունքի դրսեւորում, եւ ընդհանրապէս նոր հայաստանեան ու համաշխարհային իրավիճակում քաղաքական կենսունակութեան չափորոշիչ:

Աւելին, պրակտիկ իմաստով, միգուցէ այդքան էլ կարեւոր չէ անուանական մէկ բեւեռի ձեւաւորումը կամ ընդհանուր որեւէ ֆորմատի առկայութիւնը: Կարեւորն ընդհանուր արժէքային տիրոջթի, մտածողութեան, մշակոյթի ընդհանուր միջավայրի ձեւաւորումն է: Իսկ դա կարող է տեղի ունենալ առանց ֆորմատների, քանի որ արեւմտեան կողմնորոշումն ինքնին թերեւս պէտք է որ ընդհանուր արժէքային եւ աշխարհայեացքային ելակէտեր հաղորդի բոլոր անուանական սուբիեկտների համար, նրանց ակամայից մղելով ընդհանուր մի տիրոջթ:

Դա հնարաւոր է այն դէպքում, երբ այդ սուբիեկտները լիարժէք կերպով պատկերացնեն ընդհանուր միջազգային եւ տարածաշրջանային միջավայրը, զարգացման միտումներն ու հեռանկարները, եւ կարողանան համադրել այդ ու հայաստանեան իրակացութիւնն իր միտումներով:

Այդ դէպքում նրանց համար պարզ կը լինի, որ իրենք չունեն Հայաստանում իշխանութեան գալու առաքելութիւն: Եւ դա այն պարզ պատճառով, որ չունեն այդ առաքելութիւնն իրագործելու բաւարար համալիր ռեսուրս: Եւ ոչ ոք չի էլ պատրաստուած աջակցել իրենց այդ գործում: Իրենց առաքելութիւնը Հայաստանում հանրային եւ քաղաքական մտածողութեան եւ մշակոյթի հարցում արդիականացման գործընթացը առաջ մղելն է, կամ աւելի շուտ այդ մեծ գործընթացի առաջնային՝ առկայ կարծրատիպերի դէմ պարզապէս ճակատային բախման գնալը: Իսկ փոփոխութիւնն ինստիտուցիոնալացնելն ու իշխանութեան գալն արդէն այլ սերնդի առաքելութիւն է: Այն սերնդի, որն արդէն իսկ առկայ է հանրային միջավայրում եւ ներկայացրել է երկրի տէրը լինելու ծանրակշիռ յայտ:

Դրանից յետոյ, եթէ արեւմտեան պոտենցիալ բեւեռի սուբիեկտները կը համաձայնեն շարունակել իրենց քաղաքական առաքելութիւնը, հոգեբանօրէն հրաժարուելով իշխանութեան գալու մտքից՝ նախ այդ դէպքում միայն լիարժէքօրէն աղէկվում կը դառնան նոր իրավիճակին եւ շեշտակի կը բարձրանայ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՍԹԱՓՈՒԵԼՈՒ ԺԱՍՆԱԿԸ

ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Այնպէս ստացուեց, որ Հայաստանի անկախութեան 21-րդ տարեդարձի նախօրէին միանգամից երկու գործիչներ՝ Հրանդ Բազրատեանն ու գեներալ Արկարի Տէր-Թադեւոսեանը, խօսեցին դարաբադեան պատերազմի վերսկսման անխուսափելիութեան մասին:

Ընդ որում, Բազրատեանն այդ հարցին անդրադարձաւ «տնտեսագիտական տեսանկիւնից» եւ պարզաբանեց, որ Ատրպէյճան 40 միլիարդ տոլարի գէնք է գնել ու լրջօրէն պատրաստուած է պատերազմին, իսկ Կոմանդոսը պարզապէս ներկայացրեց իրավիճակը՝ մենք պիտի իմանանք, որ պատերազմի վերսկսման դէպքում վրաստանը բացայայտօրէն օգնելու է Ատրպէյճանին, մինչդեռ ՀԱՊԿ անդամ երկրների վրայ յոյս դնել չենք կարող, որովհետեւ այդ պայմանագրում Ղարաբաղի մասին ընդհանրապէս խօսք չկայ, եւ նրանք պարտաւորուել են պաշտպանել միայն Հայաստանի սահմանները (այն էլ դեռ հարց է՝ կ'անե՞ն դա, թէ ոչ):

Եթէ ՀԱՊԿ անդամ երկրները պատերազմի դէպքում միայն Հայաստանի սահմանները պաշտպանեն (թոյլ չտան, որ Թուրքիան միջամտի), դա էլ է հերքը: Հայ-ատրպէյճանական պատերազմից մենք «մի կերպ» գլուխ կը հանենք: Վերջին հաշուով՝ ատրպէյճանցիներին երբեք չի յաջողուել գէնքով գրաւել Ղարաբաղը. ոչ 20-րդ դարի սկզբին, ոչ 90-ականներին: Ճիշդ է, մի անգամ Շուշիի հայկական թաղամասը վառել են, բայց դա էլ՝ միայն այն պատճառով, որ այդ ժամանակ Շուշիում ընդամենը 70 հայ գինուոր կար, իսկ պահեստում՝ ընդամենը 400 փամփուշտ (չգիտես ինչու՝ փողը եւ գինամթերքը Գորիսից յամառօրէն չէին ուղարկում Ղարաբաղ):

Խնդիրը, սակայն, դա չէ, այլ այն, որ պատերազմում յաղթելու համար, ինչպէս Նապոլիոնն է ասել, անհրաժեշտ է երեք բան՝ փող, փող եւ դարձեալ փող: Իսկ մեր իշխանութիւններն այդ հարցում մի քիչ աչքածակ են: Վերջինք թէկուզ գոմէշի մսի պատմութիւնը: Հասկանալի է, չէ՞, որ այդ գործին հարիւրաւոր մարդիկ են մասնակցել (հարիւրաւոր զորամասերի ղեկավարներ տեղեակ են եղել, որ իրենց գոմէշի ժամկէտանց միս է մատակարարուում), միլիոնաւոր տղարներ են իւրացուել եւ այլն: Կամ, ասենք, Սերժ Սարգսեանը ինչիկեանի անունն է յիշում ու կոնկրետ թիւ ասում՝ 11-12 միլիարդ դրամ է իւրացուել: Եթէ պատերազմի ժամանակ ատրպէյճանցիներին յաջողուած էր, ասենք, հայկական տանկ խփել, Ալիեւը մի քսան հոգու հերոսի կոչում էր տալիս, հիմա հաշուէք, թէ ինչիկեանի այդ 11-12 միլիարդանոց խարդախութեան արդիւնքում քանի տանկ է պակասել հայկական բանակից: Հաշուէք, թէ Քաջարանի կոմբինատի՝ եկամուտներով տարեկան քանի մարտական ուղղաթիւ կարելի էր ձեռք բերել, Քոչարեանի ափրիկեան որսորդութեան արդիւնքում քանի միաւոր զրահատեխնիկայ է պակասել մեր զինուած ուժերից, չինացիներին վաճառուած երկաթահանքերի փողն ինչու է յայտնուել կոնկրետ մարդկանց գրպանում, եւ քանի «Գրադ» կարելի էր ձեռք բերել,

եթէ այդ գումարները մտնէին պիւտճէ եւ այլն: Հիմա Սերժ Սարգսեանն իրար է խառնուել, թէ հասէք-փրկէք, պիւտճէն լափում են: Երեւի նոր է գլխի ընկել: Երեւի չգիտի, որ նորմալ պիւտճէ ունենալու համար անհրաժեշտ է ընդամենը երկու բան. առաջին՝ որ նորմալ մուտքեր ապահովուեն (այսինքն՝ ստուերը կրճատուել), եւ երկրորդ՝ որ ծախսերն արդիւնաւէտ իրականացուեն: Փաստն այն է, որ Հայաստանի տնտեսութեան 50 տոկոսից աւելին ստուերում է եւ նորմալ չի վճարում հարկերը: Հիմա ի՞նչ էք կարծում, մանր-մուկը բիզնեսմեններն են թաքցնում հարկերը, թէ՛ Սերժ Սարգսեանի ու նրա շրջապատի հովանաւորեալները: Կամ ովքե՞ր են մսխում պիւտճէի միջոցները, պատահական մարդի՞կ, թէ՛ նոյն այդ Սերժ Սարգսեանի շրջապատը: Վերջին հաշուով՝ կարելի է շատ պարզ հարց առաջ քաշել. Սաշիկ Սարգսեանի անձնական ունեցուածքով քանի՞ դիվիզիա է հնարաւոր կազմաւորել եւ ապահովել գերժամանակակից սպառազինութեամբ: Բայց այս հարցին պատասխանելու փոխարէն Սերժ Սարգսեանը խօսում է այն մասին, թէ ում քեռու տղան ինչ տենդեր շահեց:

Ինչեւէ, վերադառնանք Հայաստանի շուրջ տեղեւոր իրավիճակին: Պատերազմը կարծես թէ իսկապէս անխուսափելի է, իսկ դա նշանակում է, որ սթափուելու ժամանակն է: Բայց պիտի սթափուեն ոչ թէ նախարարները՝ Սերժ Սարգսեանի հրահանգով, այլ հասարակութիւնը՝ պատերազմի վերսկսման հեռանկարն աչքի առաջ ունենալով: Եւ «սթափարան» ուղարկի նոյն այդ կառավարութեանը՝ Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏՈՒՄԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՇԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՄՈՒՆՅԱՆ
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԳԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ՆՈՐ ՆԱՄԱԿ Է ՅՂԵԼ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

«Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիր Րաֆֆի Յովհաննիսեանը նամակ է յղել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին՝ «անցած ու ապագայ ընտրութիւններէ, երկրի իրական վիճակի, մարտահրաշարանները ու դրանց լուծման վերաբերեալ հարցադրումներով», տեղեկացնում են «Ժառանգութիւն» կուսակցութեան գրասենեակից:

«Իմ Ժ-202/11 թուակիր նամակին՝ բացի բանաւոր պիտակաւորումներից, իրական պատասխանի պատիւ չստանալով, Ձեզ եմ վերաողարկում նոյն գրութեան օրախնդիր պահանջները, որոնց բաւարարումն անհրաժեշտ է առաջիկայ նախագահական ընտրութիւնները 1991 թուականից այս կողմ առաջին անգամ օրինական դարձնելու համար», - իր նամակում նշել է, մասնաւորապէս, Յովհաննիսեանը:

«Այս ուղղութեամբ, իհարկէ, օգտակար կը լինեն ոչ միայն Ձեր ձեւաւորած կառավարութեանն ուղղուած հեռուստատեսային ող-

ջունելի, բայց խիստ ընտրովի եւ ուշացած կշտամբանքները, այլեւ խորհրդարանական վերջին ընտրութիւններում Ձեր անունից արուած ու Ձեր ղեկավարած կուսակցութեան եւ/կամ իշխող միւս կուսակցութիւնների կատարած վարչական ռեսուրսի ու սպառնալիքի, համալսարան ընտրակաշառքի, ընտրացուցակների ու բազմակի քուէարկութեանը վերաբերող, ինչպէս նաեւ բացարձակապէս հակասահմանադրական մնացեալ գանցանքների մասին Ձեր համալիր, անկեղծ ու ինքնաքննադատական գնահատականը», - գրում է «Ժառանգութեան» առաջնորդը, ապա 15 կէտերով շարադրում իր կողմից առաջարկուող հիմնաքայլերը, որոնք, ըստ նրա, անհրաժեշտ են ազատ ու արդար ընտրութիւններ անցկացնելու նախագահի հռչակած յանձնառութիւնն ըստ էութեան կեանքի կոչելու համար:

Րաֆֆի Յովհաննիսեանը Սերժ Սարգսեանին նման բովանդակութեամբ նամակ էր յղել նաեւ անցած տարուայ նոյեմբերին:

ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԴՈՒՐՍ Է ԲԵՐՈՒԱԾ Է 500 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՐ

Այս տարուան առաջին կիսամեակին Հայաստանից արտահանուել է առնուազն կէս միլիար տոլարի կապիտալ: Իսկ արտահանողները եղել են հիմնականում օլիգարխները: Այս մասին Lragir.am-ին հետզրոյցում ասաց տնտեսագէտ, ԿԲ նախկին նախագահ Բագրատ Ասատրեանը՝ նշելով, որ Հայաստանի պահուստների նուազման միտումը ցոյց է տալիս՝ մեր երկրից տեղի է ունենում փողի «փախուստ»:

«Փողը փախնում է, իսկ փողը փախցնողները նախ եւ առաջ էր իշխող օլիգարխներն են», - ընդգծեց նա: Հայաստանում արձանագրուել է նաեւ արտաքին ներդրումների ծաւալների նուազում:

Անդրադառնալով գնաճի ցուցանիշին, տնտեսագէտը նշեց, որ դեռեւս տարեկանից տեսանելի էր, որ այս տարի գնաճի ցածր ցուցանիշ է լինելու: Սակայն, ելնելով միջազգային շուկայի զարգացումներից, պարէնի գնների աճ է սպասուում:

«Գների բարձրացումն արտաքին գործօններով է պայմանաւորուում առաջին հերթին, բայց չմոռանանք նաեւ, որ օլիգարխիկ, կոռուպացիոն համակարգում ենք ապրում: Եթէ միջազգային շուկայում գնաճ եղաւ, Հայաստանում պէտք է գնեն անպայման բարձրանան», - նշեց տնտեսագէտը՝ յաւելելով, որ կառավարութիւնն այս պայմաններում պէտք է աւելացնի

պարէնի պետական պահուստների ծաւալը:

Բագրատ Ասատրեանի խօսքով՝ շարունակում է մտահոգիչ մնալ արտագաղթի ծաւալը: Նա լիչեցրեց, որ այս տարուան առաջին կիսամեակում մեկնողների եւ ժամանողների տարբերութիւնն աճել է 10 հազարով՝ կազմելով 99 հազար: «Դա հիմք է տալիս մտածելու, որ մինչեւ տարեվերջ մենք կ'ունենանք առնուազն 10 հազարով աւելի արտագաղթողներ: Այս տարի նախորդ տարուան համեմատ 2,5 հազարով ծնունդների նուազում ենք ունենալու, 500-ից մի քիչ աւելի՝ մահերի աւելացում:

«Սա էլ «լաւ» քաղաքականութիւնների արդիւնքն է, որն իշխանութիւններն իրագործում են», - ասաց նա:

Ըստ Բագրատ Ասատրեանի՝ ԱՊՀ երկրների թւում Հայաստանն առանձնանում է արդիւնաբերական արտադրանքի աճի բարձր ցուցանիշով: «Բայց Հայաստանը միակ երկիրն է, որն այս տարին ամփոփելու է նախաձգածամային մակարդակից աւելի ցածր մակարդակով: Ճգնաժամից մենք դեռ դուրս չենք եկել, այնինչ ԱՊՀ բոլոր երկրներն արդէն էր փոսից դուրս եկան: Սա տնտեսութեան որակի մասին է խօսում, դիվերսիֆիկացիա չկայ», - նշեց նա՝ յաւելելով, որ հարեւան վրաստանը մեզնից շատ առաջ է:

ԳԱԳԻԿ ԶՅԱՆԳԻՐԵԱՆԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է «ՄԱՐՏԻ 1-Ի» ԳՈՐԾՈՎ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼ

Ազգային ժողովի «Հայ ազգային կոնգրէս» ընդդիմադիր խմբակցութեան պատգամաւոր, նախկին գինդատախազ Գագիկ Զհանգիրեանը շրջանառութեան մէջ է դրել 2008 թ. Մարտի 1-ի սպանութիւնների բացառապէս գործով ժամանակաւոր յանձնաժողով ստեղծելու մասին օրէնսդրական նախաձեռնութիւն:

Միեւնոյն հարցով երկրորդ ժամանակաւոր յանձնաժողով ստեղծելու սահմանադրականութեան վերաբերեալ Tert.am-ը փորձեց մեկնաբանութիւն ստանալ ԱԺ պետաիրաւական յանձնաժողովի նախագահ Դաւիթ Յարութիւնեանից՝ հաշուի առնելով, որ յանձնաժողովի եզրակացութիւն մէկ անգամ արդէն եղել է:

ԱԺ պետաիրաւական յանձնաժողովի նախագահը նշեց, որ այս հարցում, որպէս իրաւաբան, որեւէ սահմանադրական արգելք չի տեսնում. «Յամենայնդէպս, գոնէ առաջին հայեացքից, հակասահմանադրականութիւն չեմ տեսնում»:

ԱԶԳԱԳՐԱԳԵՏ. - «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՊԱՐՊԻՈՒՄ Է ԱԿՏԻ ՍԱՐԴԿԱՆՑԻՑ»

Ազգագրագէտ Հրանոյշ Խառատեանի կարծիքով, արդէն ահագնացող չափերի հասած արտագաղթը տարէցտարի կը մեծանայ:

«Նուաստացած արժանապատուութեան, վախի, վարչական մարմինների հետ յարաբերութիւնների բարդութիւնների, անյուսուլթեան, որեւէ հեռանկար չի երեւում», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում արտագաղթի պատճառներից մի քանիսը թուարկեց Խառատեանը՝ շարունակելով. - «Եթէ հենց հիմա, այս պայմաններում էլ յանկարծ ինչ-որ մի հրաշքով իրաւունքի հաւասարակշռութիւնը վերահաստատուի, այս սոված եւ աղքատ մարդիկ էլի կը մնան, որովհետեւ յոյս կը լինի, որ 2, 3, 4 տարի յետոյ աշխատանքները կ'ընտրուին, ջանքեր ներդնելու պարագայում իրենց վիճակը կը փոխուի: Բայց հիմա չի երեւում այդ հեռանկարը, եւ պիտի գնան»:

«Ես կարծում եմ, որ սա մեր իշխանութիւնների համար լուծում է: Ելի գնում են քիչ թէ շատ ակտիւ մարդիկ: Այն մարդիկ, որոնք կարող էին ընթացումն աւելցնել, կարող էին յեղափոխութիւն անել: Բայց մենք պարբերաբար պարպում ենք այդ որակից: Առաջնում է վակուում: Մինչեւ նորից ձեւաւորուի այդ որակը, անցնում է էլի որոշ ժամանակ: Իմ խորը համոզմունքը նա է, որ մենք գաղութացում երկիր ենք: Այս մարդիկ իրականում գաղութացրել են երկիրը՝ իր բոլոր դասական դրսեւորումներով», - նշեց Հրանոյշ Խառատեանը:

Զրոյցի աւիթը այս ամիս աւելի վաղ Ռուսաստանի նախագահի հրամանագրով այդ երկրի կառավարութեան «Համերկացիներ» ծրագրի երկարացումն է մինչեւ 2015 թուականի Յունուարի 1-ը:

Հայաստանում 2006 թուականից գործող այս ծրագիրը բաւականին լաւ պայմաններ է առաջարկում Ռուսաստանի Դաշնութիւնում (հիմնականում հեռուոր մարզերում) աշխատելու համար՝ 90



Ազգագրագէտ Հրանոյշ Խառատեան

օրուայ ժամանակաւոր գրանցում, վճարուած տոմսի ու բեռնափոխադրումների համար փոխհատուցում, 2 տարուայ անվճար բուժսպասարկում, ՌԴ քաղաքացիութիւն ստանալու դիւրացուած հարաւորութիւն ու այլն:

Հայաստանի միգրացիոն ծառայութեան պետ Գագիկ Եգանեանը «Համերկացիներ» ծրագրի շուրջ հրաժարուեց խօսել՝ նշելով, որ իր ղեկավարած ծառայութիւնը որեւէ առնչութիւն չունի այդ ծրագրին:

Աւելի վաղ, սակայն, նա հրապարակել էր իր ունեցած տուեալները. 4 տարուայ ընթացքում «Համերկացիներ» ծրագրին դիմած շուրջ 26 հազար հայաստանցիներից վերաբնակչի կարգավիճակով Ռուսաստան է մեկնել մօտ 1500 մարդ:

Անցած տարի, չիչեցնենք, վարչապետ Տիգրան Սարգսեանը յայտարարել էր, որ նշուած ծրագիրը «այդ ստանդարտներով» Հայաստանում չի կարող գործել: Ծրագիրը, այդուհանդերձ, երկարացուել է:

Հրանոյշ Խառատեանի համոզմամբ՝ Ռուսաստանն այս ճանապարհով իր ժողովրդագրութեան հարցն է լուծում, մինչդեռ նոյն ժողովրդագրական իրավիճակը Հայաստանում խիստ մտահոգիչ է:

ԲԻՎ-Ն ԴԵՌ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ԶԻ ԳՏՆՈՒՄ ԽՕՍԵԼ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան մամուլի խօսնակ Տիգրան Ուրիխանեանը չի ցանկանում ասել, թէ արդեօք իրենք վստահում են սոցիոլոգ Ահարոն Ադիրեկեանի հրապարակած հարցման արդիւնքներին, ըստ որոնց, հարցուածների 30.4%-ը ընդդիմութեան միանակական թեկնածու է տեսնում ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկեանին:

Tert.am-ի հետ զրոյցում նա նշեց, որ չի ցանկանում այս պահի դրութեամբ մեկնաբանել որեւէ հարց՝ կապուած նախագահական ընտրութիւնների հետ:

«Խօսք վերաբերում է այդ թւում նաեւ նախագահական ընտրութիւնների հնարաւոր թեկնածուների վարկանիշների մասին», - ասաց նա:

«Սակայն, ինչ վերաբերում է Ծառուկեանի վարկանիշին, ես բազմիցս խօսել եմ դրա մասին եւ աւելացնելու ոչ մի բան չունեմ», - ասաց նա եւ ընդգծեց, որ նախագահական ընտրութիւններից չի խօսում՝ ելնելով կուսակցութեան մարտավարութեան նկատառումներից:

Տիգրան Ուրիխանեանը նշեց, որ խօսելու են միայն այն պահին, երբ կը գտնեն աւելի նպատակաշարմար:

Շարքին, թէ արդեօք Գագիկ Ծառուկեանի ընդդիմութեան միանակական թեկնածու լինելը ձեռք է տալիս իրականում իշխանութիւններին, ԲՀԿ մամուլի խօսնակը պատասխանեց. «Ում էլ ինչ ուզում է ձեռք տայ, ձեռք չտայ, վերջապէս կայ իրականութիւն եւ դրանից բխող բոլոր զարգացումներն ու հետեւանքները»:

Յիչեցնենք, որ սոցիոլոգ Ահարոն Ադիրեկեանն հրապարակել էր իր ղեկավարած «Սոցիոմետր» սոցիոլոգիական հարցումների կենտրոնի անցկացրած հարցման արդիւնքները, ըստ որոնց ընտրողների 30.4%-ը ընդդիմութեան կողմից ՀՀ նախագահի թեկնածու է տեսնում ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկեանին, 10.1%-ն ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Գոչարեանին, 8.7%-ը՝ «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանին, 4%-ը ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանին:

ԼՈՒՐԵՐ

ԱՂՐԲԵՋԱՆԻՆ ԶԱՅՐԱՑՐԵԼ Է ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ «ՆԻԻ ԵՈՐՔ ԹԱՅԱԶԻ» ՅՕԴՈՒԿԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգներում Աղբբեջանի դեսպանատունը մօտ ժամանակներս կը պատասխանի The New York Times պարբերականի՝ Լեոնային Ղարաբաղի մասին հրապարակմանը:

«Համապատասխան յանձնարարութիւնը Աղբբեջանի արտգործնախարարութիւնից արդէն տրուել է», - յայտարարել է Աղբբեջանի արտգործնախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Էլման Աբդուլաեւը:

The New York Times ամերիկեան պարբերականի «Ճանապարհորդութիւն» բաժնում Սեպտեմբերի 21-ին հրապարակուել էր մի յօդուած՝ Լեոնային Ղարաբաղի մասին, որի հեղինակը՝ հայազգի Ռասա Ջասկալեանը պատմում է անցած տարի Ղարաբաղ կատարած իր ճանապարհորդութեան մասին ու նաեւ խորհուրդներ տալիս Ղարաբաղ այցելել ցանկացողներին, թէ ինչպէս վիզա ստանալ, որտեղ գիշերակաց գտնել, ինչ տրանսպորտով հասնել Ստեփանակերտ՝ չմոռանալով զգուշացնել, որ դա թոյլ նիարդեր ունեցողների համար չէ, եւ որ այդ երկիրը փաս-

տացի պատերազմական վիճակում է գտնուում, չնայած յայտարարուած հրադադարին:

Աղբբեջանին վրդովուցեցրել է յօդուածի այն հատուածը, որտեղ հեղինակը տեղեկացնում է, որ Լեոնային Ղարաբաղ այցելելու համար մուտքի արտօնագիր պէտք է ստանալ Երեւանում:

«Այդ կարգի խորհուրդները անօրինական են, եւ տարածաշրջան այցելութիւնը առանց Աղբբեջանի համաձայնութեան հակիրճաւական գործողութիւն է», - յայտարարել է Աբդուլաեւը:

Այն անձինք, ովքեր այցելում են Ղարաբաղ, յայտնում են Աղբբեջանի արտգործնախարարութեան սեւ ցուցակում, նրանց մուտքը Աղբբեջան արգելու է:

Յօդուածում Ջասկալեանը նաեւ այդ փաստն է նշում՝ զգուշացնելով, որ եթէ Ղարաբաղ այցելողները մտադրութիւն ունեն հետագայում նաեւ Աղբբեջան գնալ, ապա պէտք է ինդրեն մուտքի արտօնագիրը առանձին թերթի վրայ դրոշմել, որը հետագայում հնարաւոր կը լինի հեռացնել անհարկից:

ՀԱՅԱՍՏԱՆ ՆՇԵՑ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ



Սերժ Սարգսեան ելոյթ կ'ունենայ Հայաստանի անկախութեան տօնին առթիւ

Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրում Սեպտեմբեր 21-ին տեղի ունեցաւ տօնական ընդունելութիւն՝ Հայաստանի անկախութեան հռչակման 21-րդ տարեդարձի առթիւ:

Ընդունելութիւնը ելոյթ ունեցաւ նախագահ Սերժ Սարգսեանը: Նրա ելոյթը նուիրուած էր հիմնականում Ղարաբաղի ինդրին:

«Անցած 21 տարիները ցոյց տուցին ոչ միայն հայոց պետականութեան կենսունակութիւնը, այլեւ բարդագոյն իրավիճակներում ինդրները լուծելու նրա կարողութիւնը», - ասաց նախագահը՝ շարունակելով. - «Եթէ Միտակի խմբի համանախագահների ջանքերը մինչեւ հիմա չեն պսակուել մեծ յաջողութիւններով, դրա պատասխանատուն համանախագահները չեն եւ, առաւել եւս, ոչ էլ միջազգային այդ ձեւաչափը, ինչպէս յաճախ փորձում են ներկայացնել մեր հարեւանները: Մեղաւորը նրանք են, ովքեր պարբերաբար ուժահարում են խաղաղ բանակցութիւնների ընթացքն ու տրամաբանութիւնը: Վերջին սաղրանքն այն նոյն նողկալի իրադարձութիւններն էին, որոնք հանգեցրեցին մարդասպանի արդարացմանն ու հերոսացմանը: Ե՛ւ մենք, ե՛ւ միջազգային հանրութիւնը աւելի քան յստակ արտայայտել ենք մեր դիրքորոշումն այս կապակցութեամբ: Ընդունում եմ, որ շատ դժուար է այս պայմաններում մեր հասարակութեանը տրամադրել հաշտեցման եւ նոյնիսկ պատրաստել խաղաղութեան, բայց նաեւ գիտեմ, որ դա ճիշդ ճանապարհն է»:

«Պատրաստուել խաղաղութեան՝ ամենեւին չի նշանակում պատրաստ չլինել պատերազմի եւ ինքնապաշտպանութեան: Ասուածը նշանակում է չպղտորել մարդկանց միտքն ու հոգին հակամարդկային գաղափարներով ու այլամերժութեամբ, չգոմբիացնել երիտասարդներին», - ասաց նախագահը: - «Գաղտագողի սպանութիւնը վախկոտների գործելակերպն է, իսկ մեր՝ ծնողներին առաքելութիւնն է մեծացնել ազատ, գրագէտ ու խիզախ գաւակներ: Որքան էլ խրթին լինի պահը, մենք իրաւունք չունենք դաւաճանելու ինքներս մեզ»:

Խօսելով Հայաստանի անկախութեան անցած տարիների մասին՝ երկրի ղեկավարն ասաց, թէ դրանք «հաւատարմութեան տարիներ էին». - «Հաւատարմութիւն մեր ժողովրդի ընտրութեանը, ազատութեանն ու ժողովրդավարութեանը, հաւատարմութիւն մեր դաշնակիցներին եւ գործընկերներին»:

Ընդունելութեանը, որին ներկայ էին Լեոնային Ղարաբաղի նախագահը, Հայաստանի կառավարութիւնը՝ վարչապետի գլխաւորութեամբ, չմասնակցեցին Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեանը, ով Խորհրդարանների նախագահների եւրոպական համաժողովի շրջանակներում Ստրասբուրգում էր, եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Մառտիկեանը:

Ընդունելութեանը ներկայ էին նաեւ Հայաստանի առաջին եւ երկրորդ նախագահները:

ՍՓԻՌԷԱՅԱՅ ՆԵՐԴՐՈՂՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍԸ

Շարունակուած էջ 1-էն

նին կառուցած է 13 յարկանի բազմաբնակարան շէնք, սակայն շինարարութեան աւարտէն յետոյ ներդրողները չեն ստացած ո'չ իրենց հասանելիք բնակարանները, ո'չ ալ գումարը: Փոխարէնը, ըստ փաստաբաններուն, բնակարանները ապօրինաբար կը վաճառուին ու գումարն ալ կ'իրացնեն հայաստանցի գործարարներ՝ Վլադիսլաւ Մանգասարեանը ու Էդիկ Եսայեանը:

Գլխաւոր դատախազի մամուլի խօսնակ Սոնա Տուրքեան այս

կապակցութեամբ «Ազատութիւն» ռատիոկայանին բաւարարուած է փոխանցելով հետեւեալ բացատրութիւնը. - «2007թ. ընդունուած դատախազութեան մասին նոր օրէնքի համաձայն, դատախազութիւնը նախաքննութիւն չի իրականացնում, այն քննչական մարմինն է, եւ նշուած քրէական գործերը քննում են այլ քննչական մարմիններում: Իսկ եթէ քննութեան ընթացքի վերաբերեալ կան դժգոհութիւններ, ապա օրէնքով սահմանուած կարգով՝ կարող են բողոքարկուել»:

Լ. ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԳՆԴԱԿԻՑ ԶԻՆՈՒՈՐ Է ՄԱՐԱՑԵԼ

Սեպտեմբեր, 25-ի ժամը 11:30-ի սահմաններում N գօրամասի մարտական դիրքում, ըստ նախնական տուեալների՝ հակառակորդի կողմից արձակուած զնդակից հրագէնային մարմնական վնասուածք է ստացել եւ տեղում մահացել նոյն գօրամասի ժամկէտային զինծառայող, շարքային Վաղինակ Արշալիքի Բաղդասարեանը (ծնուած 1993 թուականին, 2011-1 գ/կ, Նոր Նորքի ԶԿ): Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնից «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեցին, որ դէպքը տեղի է ունեցել Լեոնային Ղարաբաղում՝ Մարտակերտում:

Նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնու-

թեան հետ կապերի վարչութիւնը տեղեկացնում է, որ փաստի առթիւ պաշտպանութեան նախարարութեան քննչական ծառայութեան երրորդ կայազօրային քննչական բաժնում ՀՀ քրէական օրէնագրքի 104 յօդուածի 2-րդ մասի 13-րդ կէտով (սպանութիւնը՝ ազգային, ռասայական կամ կրօնական ատելութեան կամ կրօնական մոլեռանդութեան շարժառիթով) յարուցուել է քրէական գործ եւ կատարուել է նախաքննութիւն: Կատարուել են դէպքի վայրի եւ դիակի արտաքին զննութիւններ, նշանակուել է դիակի դատաբժշկական փորձաքննութիւն: Քրէական գործի նախաքննութիւնը շարունակուում է:

«ԻՆՉ ԿԸ ԼԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, ԵԹԷ ԻՄՐԱՅԵԼԸ ՀԱՐՈՒԿԸ ԻՐԱՆԻՆ» . ATLANTIC SENTINEL

Ամերիկեան «Atlantic Sentinel» վերլուծական կայքը դիտարկել է Իրանի վրայ իսրայէլի յարձակման հնարաւորութիւնը՝ Կովկասի ու Հայաստանի վրայ դրա ունեցած հետեւանքների տեսանկիւնից:

Ըստ աղբբբի՝ Իսրայէլի յարձակումն Իրանի վրայ՝ ԱՄՆ-ի աջակցութեամբ, թէ միայնակ, իր հետեւանքները կարող է ունենալ Կովկասում իրավիճակը ապակայունացնելու եւ Ռուսաստանին խթանելու գործում:

Վրաստանի հետ Հարաւային Օսիայի սահմանին ռուսական զինուորի կենտրոնացումը, ըստ աղբբբի, վկայում է այն մասին, որ Ռուսաստանն Իրանի վրայ յարձակում է ակնկալում մինչեւ այս տարուալ աւարտը, եւ դա դիտարկում է որպէս տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդելու հնարաւորութիւն:

Սակայն, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Վրաստանի իր գործընկեր Միխէիլ Սաակաշվիլին եւս մէկ անգամ ստորացնելու հնարաւորութեանը չէ, որ հետամուտ է, ընդգծում է AS-ը:

«Հարեւան Հայաստանը, որը վատ յարաբերութիւններ ունի առաւել արեւմտամէտ Աղբբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի հետ, մեծապէս կախուած է Իրանից՝ նախ իր գազի ներմուծմամբ, եւ կարող է փախստականների մեծ հոսք ընդունել, ինչը կը մեծացնի լարուածութիւնը Հարաւային Կովկասում: Հայաստանը հաւանաբար կը գրկուի էներգառեսուրսներից, եթէ պատերազմ լինի, մինչդեռ Աղբբեջանը կարող է ստեղծուած իրավիճակից օգտուել՝ վերագրաւելու Լեոնային Ղարաբաղի վիճելի տարածքը», - գրում է վերլուծական կայքը:

Այս պարագայում, ենթադրում է աղբբբը, Ռուսաստանը կը կատարի իր «պարտաւորութիւնները Հայաստանի հանդէպ»՝ ՀԱՊԿ-ի շրջանակներում:

Պատերազմի պայմաններում Ռուսաստանը կը սկսի վերահսկել կասպեան զրեթէ բոլոր էներգառեսուրսները, ինչը կարող է աննախադէպ թանկացումների ու տնտեսական անկայունութեան հանգեցնել Արեւմուտքում:

Ս.Դ.Յ.Կ. 125 ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅԹ

Շարունակում էք 1-էն

Սրբազան հօր կողմից ողջունեց ներկաները եւ պատմական այս իրադարձութեան առթիւ իր բարեմաղթութիւնները փոխանցեց Հնչակեան կուսակցութեան ղեկավարութեան ու անդամներուն:

Հայր Պարետ հակիրճ կերպով անդրադարձաւ Մայր կուսակցութեան ու անոր քաջամարտիկներու մղած ազատագրական պայքարին, նպատակադրելով ազատել հայութիւնը օսմանեան բիրտ լուծէն:

Օրուան հանդիսավար ընկերուհի Ծովիկ Քէօրօղլեան 125 ամեակի կազմակերպիչ յանձնախումբի անունով ջերմօրէն ողջունեց հիւրերն ու ներկայ հասարակութիւնը, որոնք եկած էին միասնաբար նշելու մեր փառապանծ կուսակցութեան 125 ամեակը:

Իր բացման խօսքին մէջ ընկերուհի Կարինէ Տեփոյեան, հպանցիկ ակնարկ մը նետելով Հնչակեան կուսակցութեան մղած ազատագրական յանդուգն պայքարներուն վրայ, ոգեկոչեց յիշատակը մեր անմահանուն հերոսներուն, որոնք իրենց կեանքը նուիրեցին իրաւագուրկ հայ ժողովուրդի արդար դատին համար:

Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան՝ խօսք առնելով, անդրադարձաւ մասնաւորաբար հայ երգի եւ առանձնապէս հայրենասիրական երգերու ուսուցման կարեւորութեան եւ անոր ներգործօն դերին մասին, որ մեծ նշանակութիւն ունի մեր հայ ինքնութեան գոյապայքարին մէջ: Ուստի՝ պատգամեց սիրել մեր հարուստ ժառանգութեան արտայայտիչն եղող հայ երգը:

Ընկերուհի Լենա Տէրտէրեան հանգամանաւոր կերպով ներկայացուց երեկոյթի նախագահ Տէր եւ Տիկ. Թադէոս եւ Նորա Քէօրօղլեանները: Արդարեւ, Թադէոս Քէօրօղլեանը տասնեակ տարիներէ ի վեր իր անխնայ մասնակցութիւնը կը բերէ մեր կազմակերպութեան մարզական եւ ընկերային տարբեր կառուցներէն ներս: Յաճախ ստանձնած է պատասխանատու պաշտօններ, գորս կատարած է մեծ պարտաճանաչութեամբ ու նուիրումով: Իսկ իր տիկինը Նորան, հակառակ օտար ըլլալուն, սիրով սորված է հայոց լեզուն եւ քաջալերած է իր ամուսնոյն ազգանուէր ծառայութիւնները:

Այս յիշատակելի օրուան առթիւ ընկեր Թադէոս Քէօրօղլեան պարգեւատրուեցաւ «Պատուոյ Գիր» յուշատախտակով մը, ձեռամբ շրջանի ՍԳՀԿ ատենապետ ընկ. Վազգէն Խոտանեանի: Միաժամանակ Տիկ. Նորային տրուեցաւ գեղեցիկ ծաղկեփունջ մը:

Ընկերուհի Կարինէ Գօճապապեան ներկայացուց Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Վազգէն Գալթագճեանը, որ արժանացաւ «Պատուոյ Գիր»-ի, իր գաղութային եւ կուսակցական տարբեր կառուցներուն մատուցած նիւթաբարոյական բազմապիսի ծառայութեանց համար:

Այս առթիւ օրուան նախագահ Տէր եւ Տիկ. Թադէոս Քէօրօղլեան 10,000 տոլար նուիրեցին «Կայծ» Երիտասարդակամ միութեան ֆոնտին: Իսկ ընկ. Վազգէն Գալթագճեան 5,000 նուիրեց նոյն նպատակին: Եղան նաեւ սրտաբուխ այլ նուիրատուութիւններ:

Հետաքրքրական էր օրուան վիճակահանութիւնը: Իւրաքանչիւր տոմս կուսակցութեան 125 ամեակի պիտակը կրող կարմիր գինիի շիշ մըն էր: Իսկ քսանեակ մը բախտաւորներ ստացան արժէքաւոր նուէրներ:

Երեկոն խանդավառեց յատկապէս Լոնտոնէն ժամանած ազգային եւ ժողովրդային երգերու մեկնաբան սիրուած երգիչ Սամուէլ Վարդանեան: Ան իր երազացանկն սկսաւ նախ մեղմ երգերով, ընկերակցութեամբ իր նուագախումբին: Ապա մթնոլորտն աւելի շրտացաւ ազգային ու յեղափոխական երգերով, ստեղծելով հայրենասիրական խանդավառ մթնոլորտ մը: Շատեր կը մասնակցէին մեր տոհմիկ եւ ֆէտայական երգերուն...: Իսկ պատանիներն ու երիտասարդները կ'երգէին դրօշներն օրօրելով, որպէս զի... «ծածանի այնտեղ»... «Հայոց Լեռներ»ուն վրայ...:

Խանդավառ մթնոլորտը տեւեց երկար ժամեր: Ոչ ոք կ'ուզէր սրահի ուրախ պահերէն բաժնուիլ: Սիրուած երգիչը գրեթէ դադար չուներ:

Առաւօտեան առաջին ժամերուն ներկաները բաժնուեցան հանդիսավայրէն, իրենց հետ տանելով հայրենական անմոռանալի երեկոյթի մը լաւագոյն տպաւորութիւնները: Գ. Մ.

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ Զ.Յ. ԶԻՒՊԱՏՈՍՈՒԹԻՒՆԸ ՆՇԵՑ ԶԱՅԱՍԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԺ



ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՀՀ Հիւպատոսութեան նախաձեռնութեամբ, Ուրբաթ 21 Սեպտեմբեր 2012, կ.վ. ժամը 6.30-էն 9.30, տեղի ունեցաւ ՀՀ Անկախութեան 21-րդ Տարեդարձի նուիրուած շքեղ ընդունելութիւն մը, Կլենտէյլի հիւպատոսական «Հայաստանի Տան» մէջ, ուր հայ համայնքը ներկայ էր իր ազգային, քաղաքական, կրօնական եւ մշակութային ոլորտներու ներկայացուցիչներով:

Նոյնպէս, իրենց ներկայութեամբ, ուշադրութիւն կը գրաւէին Լոս Անճելըսի եւ Կլենտէյլի քաղաքական իշխանութիւններու ղեմները, ԱՄՆի Արեւմտեան ափի հաւատարմագրուած դիւանագէտներ եւ պաշտօնեաներ, որոնք եկած էին ջերմօրէն շնորհաւորելու ՀՀ գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննէսեանը, ՀՀ Անկախութեան առիթով: Այդ շրջագծէն ներս, կարգացուեցաւ Լոս Անճելոսի վերահսկիչներու Տան անունով, համանուն խորհուրդի անդամ՝ Զեւարօսյանի խմբագրած հուշակագիրը: Եարօսյանի հուշակագիրին մէջ, ջերմօրէն կը շնորհաւորէ ՀՀ Անկախութեան 21-րդ տարեդարձը եւ Հայաստան աշխարհին կը մաղթէ բարգաւաճ ապագայ:

Իր աւուր պատշաճի բարի գալուստի, շնորհակալութեան եւ շնորհաւորութեան ջերմ խօսքերով ելոյթ ունեցաւ Լոս Անճելոսի ՀՀ գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննէսեան:

Պրն. Աւագ Հիւպատոսը շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն՝ հիւպատոսութեան հրաւերին

ընդառաջելուն համար:

Նաեւ, ան շնորհաւորեց բոլորին Հ.Հ. Անկախութեան 21-րդ տարեդարձի տօնական բարեբաւտիկ առիթով: Այդ շրջագծէն ներս, ան բարձր գնահատեց ամերիկահայ համայնքի նշանակալի ներդրումը, Հայաստանի Անկախութեան 21 տարիներու շրջանի ամբողջ տեւողութեան:

Մեծայարգ Աւագ Հիւպատոսը, իր խօսքին մէջ ըսաւ. «Մեր երկրի անկախութեան 21 տարիները նաեւ ձեր ջանքերի արդիւնքն են, եւ այսօր կ'ուզենայի իմ ու մեր երկրի անունից շնորհակալութիւն յայտնել բոլորիդ, Հայաստանի Հանրապետութեան կայացման գործում ամէն մէկիդ ունեցած ներդրման համար»:

Այնուհետեւ գործադրութեան դրուեցաւ գեղարուեստական կոլիկ յայտագիր մը, որուն իրենց տպաւորիչ մասնակցութիւնը բերին սիրուած երգիչ՝ ամերիկահայ Յարութ Փամպուկճեանը եւ Հայաստանի Երգի Պետական Թատրոնի սաները:

Յարութ Փամբուկճեանի եւ ՀՀ Անկախութեան տարիքին մէջ գտնուող հայրենի Երգի պետական թատրոնի երեք սան եւ երեք սանուհիներու բարձրարուեստ կատարողութեամբ երգուած Հայրենասիրական երգերը ոգեւորեցին ներկաները, որոնք ծափողջոյններով եւ «պիղ»երու տարափով բարձր գնահատանքին արժանացուցին գաւտնք:

Հ.Հ. Անկախութեան 21 -րդ տարեդարձին նուիրուած յիշատակելի ընդունելութիւն մը, որուն համար պիտի արժէր շնորհաւորել Լոս Անճելոսի Հ.Հ. հիւպատոսութիւնը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՆՈՒԱՅՆԵԼ (626) 797-7680



«ՔԱՋ ՆԱԳԱՐ» ԵՐԳԻԾԱԹԵՐԹԻ 40-ԱՄԵԱԿԸ

Սեպտեմբեր 30ին Կլեմտեյի Հայ սֆուլի դահլիճին մէջ պիտի նշուի սփիւոֆի միակ երգիծաբերք «Քաջ Նագար»ի հրատարակութեան 40 ամեակը:

Այդ կապակցութեամբ հանդիպում մը կազմակերպեցին երգիծաբերքի խմբագիր Յովհաննէս Բալայեանի հետ: Վաստակաշատ լրագրողը մեզի տրամադրեց ինքնակենսագրականը եւ իր անցած դժուարին ցամաքում վերաբերող սոյն գրութիւնը:

Կը շնորհաւորեն մեր պաշտօնակից «Քաջ Նագար» երգիծաբերքի 40 ամեակը, խմբագիր Յովհաննէս Բալայեանին եւ բոլոր աշխատակիցներուն, մաղթելով յարատեւութիւն, անսպառ ոյժ եւ կորով, շարունակելու իրենց դժուարին, բայց ազգօգուտ աշխատանքները:

«Մասիս» Ստորեւ կու տանք «Քաջ Նագար» երգիծաբերքի հրատարակիչ եւ խմբագիր Յովհաննէս Բալայեանի ինքնակենսագրականը, որոշյապաւուսմանով խմբ.

ԱՐԱ ԵՒ ԵՍ ՅՈՎՐԱՆՆԵՍ ԲԱԼԱՅԵԱՆ

Ծնուել է 1930 թուի Նոյեմբերի 25ին Երեւանում:

1932ին մեր ընտանիքը փոխադրուել է Թաւրիզ (Իրան) որտեղ հայրս քահանայ է ձեռնադրուել, Ատրպատականի նուիրեալ Առաջնորդ Տ. Ներսէս Ս. Արք. Մելիք Թանգեանի միջոցով:

Ղազուխում դպրոցական դասերի հետ համընթաց, մասնակցել է մշակութային, մարզական եւ այլ միութիւնների աշխատանքներին, հիմնադրել է միութիւններ, թատերական խմբեր, կազմակերպել է հանդէսներ, բեմադրել է մանկապատանեկան թատերգութիւններ: Յ. Թումանեանին նուիրուած գրական երեկոյին՝ որն կազմակերպուած էր երիտասարդական «Կամք» միութեան կողմից, մէկ շնչով անգիր արտասանել է «Սատուցի Դաւիթ» ժողովրդական էպոսը եւ արժանանում գնահատանքի: Մեծ պատրաստութեամբ, պատանեկան եռանդով, Ղազուխի ազգային «Րաֆֆի» դպրոցի սրահում բեմադրել է «Քաջ Նագար կոմեդիան» (13 անգամ) որն լայն արձագանք գտաւ իրանահայ մամուլում: Ես կատարում էի Քաջ Նագարի դերը:

Ղազուխի պարսիկ մամուլում Ղազարոս Աղայեանի «Արեգնազան»ը թարգմանաբար լոյս ընծայեցի տեղական «Նով ուուզ» շաբաթաթերթում: Յօդուածներ եւ թղթակցութիւններ էի ուղարկում Թեհրանի «Վերածնունդ» օրաթերթին, «Նոր Այգ» եւ «Պահակ» շաբաթաթերթերին եւ Թաւրիզ լոյս տեսնող «Հակաֆաշիստ», «Արեւելք» եւ «Վերելք» շաբաթաթերթերին: Երգիծական գրութիւններով հանդէս էի գալիս Թեհրանի «Բորոխ» եւ «Ցախաւել» երգիծաթերթերում: Իսկ Երեւանի ռատ-

իոյի սփիւոֆի հայութեան համար տրուող հաղորդումների լուրերի բաժինը ամէն գիշեր տղազրում եւ ջաշորդ օրը հասցնում էի հայրենասէր լրագրող՝ Հայկ Գարագաշի «Վերածնունդ» օրաթերթին: Այդ աշխատանքը շարունակեցի 3-4 տարի: Պաշտօնական թղթակցից էի Աղեքսանդրիայի (Եգիպտոս) «Արաքս» շաբաթաթերթի, որտեղ լոյս էին տեսնում իրանահայ կեանքին առնչուող լուրեր եւ տեղեկանքներ: Թեհրանում մասնակցեցի մի քանի բեմադրութիւնների, շնորհալի դերասան Արմենակ Ահարոնեանի գլխավորութեամբ:

Թեհրանում ամուսնացաւ, որի արդիւնքում ունեցաւ 4 զաւակներ, (3 տղայ եւ մէկ աղջիկ):

Պատանեկութեան տարիներից սկսած, Ղազուխում յաճախելով քաղաքի ամենառաջին ատամբարձ Տոքթ. Մաթեոս Ոսկանեանի ատամնաբուժարանը, մի քանի տարի յետոյ տիրապետեցի ատամներ պատրաստելու արհեստին, հմտացաւ եւ կարճ ժամանակ անց բացարի իմ անձնական լաբորատորիան՝ Ղազուխում, Թաքսթանում, Հաշտգերդում, Քարաշում, Թեհրանում եւ այլուր: Ի դէպ Ամերիկայում ես տարիներ աշխատեցի զանազան ատամնաբուժական հաստատութիւններում (Փալմ Սփրինգ), ինձ վիճակուեց հանրայնութեանը փոխադրելու ֆրէսլիի համար մի քանի արհեստական ատամներ պատրաստել: Այդ գործի շնորհիւ ինձ համար ստեղծուեց նիւթական փայլուն վիճակ, յատկապէս Ամերիկայում, որտեղ ես նիւթական կայուն դրութեան մէջ էի:

1965 թուից հաստատուելով Մ. Նահանգներ, Լոս Անձելոսում մասնակցել էմ ազգային բնոյթ կրող մի շարք ձեռնարկների (գրա-



կան, թատերկան, արտասանական): Իսկ 1970 թուին որոշեցի իրականացնել երկար տարիների իմ երազանքը, ունենալ սեփական երգիծաթերթ:

1970 թուի Նոյեմբեր ամսին ձորճ Ուզունեանի տպարանից լոյս տեսաւ «Քաջ Նագար»ի առաջին թիւը, 8 մեծադիր էջ, ընտիր թուղթ, որն անմիջապէս արժանացաւ ընդունելութեան եւ գնահատանքին: Թերթի առաջին աշխատակիցը յատկապէս խրախօսողը եղաւ խմբագիր մտաւորական Օշին Քէշիշեանը: 1975 եւ 1978 թուերին այցելեցի Իրան: Ինձ հետ Իրան էի տարել հայկական կինօ-ժապաւէսներ եւ զանազան արուեստագետներ: Երկու անգամ, տարբեր արքայական պալատներում, արժանացաւ Իրանի Արքայ Մահմատ Ռէզա Փահլաւի ունկնդրութեանը, որն մօտիկից հետաքրքրուելով Մ. Նահանգներ հաստատուած իրանահայերի կեանքից, գնահատեց մեր թերթը եւ մեր աշխատանքները:

Հոլիվուդում առաջին հայ լրագրողն էի, որ մասնակցեցի Օսքար եւ Կոլտրն Կլոպ ֆիլմ միջազգային փառատօնին: Ամբողջ 40 տարի աշխատեցի «Քաջ Նագար»ը պահել իր կոչման բարձրութեան վրայ: Աշխատեցի հեռու մնալ անհատական, կուսակցական նեղ ու ճղճիմ հաշիւներ մաքրելուց, քրնախնդրութիւնից եւ բամբասանքից:

Քառորդ դարի ընթացքում ունեցաւ բազմաթիւ վերիվայրումներ, այն աստիճան, որ երբեմն մտածում էի թողնել թերթը, ու վերադառնալ իմ անձնական ձեռնարկութիւններին: Սակայն ժողովրդին ծառայելու սէրը ինձ խթանեց շարունակելու հայ լրագրողի ապերախտ եւ անշնորհակալ գործը, երբեմն գնահատուելով, երբեմն ստանալով հայհոյակից եւ

սպառնալից հեռախօսազանգեր եւ նամակներ: Ամէն տարի կազմակերպել էմ ուրախ երեկոներ, գրական-յոբելեանական հանդիսութիւններ: Հայրենիքից հրաւիրել էմ գեղարուեստական խմբեր, արուեստագետներ:

Որպէս իրանահանայ, հենց սկզբնական օրերից ջերմ շփման մէջ էմ եղել Լոս Անձելոսի Իրանահայ Միութեան հետ: Թերթիա էջերը լայնօրէն բացել էմ միութեան առաջ եւ անդրադարձել էմ միութեան բոլոր ձեռնարկներին:

Թերթըս իմ ստացած ազգային դաստիարակութեան պատճառով է, որ մինչեւ օրս ես իմ բոլոր կարելիութիւններով, ոգով ու սրտով կապուել էմ Մայր Հայրենիքի հետ եւ միշտ մնացել էմ հայրենասիրական ճակատում: Հայրենիքը պաշտպանել էմ երբ այնտեղ տիրում էր համայնավար իրաւակարգ: Այսօր եւս հայրենիքի հետ էմ, ու կը մնամ միշտ: Որովհետեւ հաւատացած էմ որ վարչակարգերը եւ ղեկավարները անցնող-գնացող են, միայն հայրենիքն է մնացուն:

Մեծ եղբայրս՝ Մեսրոպը աւարտելով Թեհրանի Պետական Համալսարանի ֆրանսական գրականութեա ճիւղը, որպէս գերագանց ուսանող, Իրանի պետութեան կողմից ուարկուեց Փարիզ, Սորպոնի համալսարանում շարունակելու իր ուսումը: Յաջողութեամբ աւարտելով իր նախասիրած ճիւղերը Մեսրոպը ստացաւ հոգեբանութեան եւ ֆրանսական գրականութեան դոկտորայի տիտղոսները ու վերադառնալով Իրան հրաւիրուեց Իսֆահանի Պետական Համալսարան: Այդտեղ նա հիմնեց հոգեբանական լաբորատորիա, (առաջինը Միջին Արեւելքում): Միւս եղբայրս Ներսէսը «Քաջ Նագար»ի հրատարակութեան օրից աշխատակցել է թերթիս, գրելով համով հոտով երգիծական յօդուածներ եւ ակնարկներ: Նա Իրանում եւ այլուր ճանաչուած է որպէս շնորհալի երգիծագիր եւ բանաստեղծ: Հայրենիքն լեզուն սովորել է հօրս եւ մեծ եղբորս օգնութեամբ: Տպագրել է բանաստեղծութիւնների 4 հատոր: Իր երգիծականները ամփոփուած են «Խառնափնիթը» եւ «Առօրեայ կեանքում» հատորների մէջ, որոնք անտիպ են: «Խառնափնիթը»ը 1988 թուին արժանացել է Հայկաշէնի Ներսէս Շնորհալի գրական մրցանակին: Ամէն ամիս «Քաջ Նագար»ի համար արդէն 38 տարի է ինչ գրում է «Թեհրանեան Նամական»ին, Մատլի Բաշի ստորագրութեամբ, որն ընթերցուած է մեծ հետաքրքրութեամբ: «Քաջ Նագար»ը

Շար.ը էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ԲԱՐՍԵՂ ԶԱՔԱՐԵԱՆ ԼԵՒՈՆ



ՏՈՒՓԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

Հայ ժողովուրդի ազատագրութեան համար իր կեանքը նուիրաբերելու պատրաստակամ երիտասարդներու տիպարներէն է Բարսեղ Զաքարեան:

Բ. Զաքարեան ծնած է Շուշի, 1870ին:

Նախակրթութիւնը կը ստանայ Շուշիի մէջ: Այդ տարիներուն Բ. Զաքարեանի պատանեկան հետաքրքրութիւններուն մասին իր դասընկերը, ապագային ՀՅԴ-ի յայտնի դէմքերէն Միքայէլ Վարանդեան կը վկայէ. «Զեռքէ ձեռք կ'անցնէին մանաւանդ «Կայծեր»ը: Օր մը Բարսեղ Զաքարեան-նոյն Շուշուայ արքունական դպրոցի դասընկերս-յուզուած ձայնով ըսաւ ինծի, որ մէկ գիշերուան մէջ վերջացուց այդ գրքի երկու հատորներու ընթերցումը: սիրուն աչքերը մարեր էին յոգնութենէն եւ բիբերը կարմրեր արցունքներէն»:

(1) Բ. Զաքարեան միջնակարգ կրթութիւնը կը ստանայ Պաքուի Ռիալական դպրոցին մէջ:

1890ին կը մեկնի ժընեւ եւ կ'ուսանի ժընեւի համալսարանի ընկերային գիտութիւններու բաժնին մէջ:

Ազատագրական պայքարի հողիով տոգորուած Բ. Զաքարեան, անմիջապէս կը միանայ «Հնչակ»ի Կեդրոնին: Կը ստանանք Կեդրոնի քարտուղարութեան պաշտօնը: Այդ մասին Ռուբէն Պէրպետեան կը վկայէ. «Լեւոն Բարսեղեանին եւ ինձ յանձնել էին «քարտուղարական» պարտականութիւններ. Լեւոնը արձանագրում էր ստանձնուող ու առաքուող նամակները եւ կապոցները, գումարները եւ օգնում էի նրան կամ փոխադրում: Լ. Բարսեղեանը գրում էր գեղեցիկ եւ շատ արագ»:

(2) Այդ շրջանին, Բ. Զաքարեան «համարեա միշտ» (3) ներկայ կ'ըլլայ Պլեխանովի շուրջ համախմբուած ուսանողներու տեսական հաւաքներուն:

Նոյն շրջանին, Բ. Զաքարեան՝ Աւետիս Նազարէկեանի, Մարգիս Աղամիրզեանի (Սաքօ) եւ Ռուբէն Պէրպետեանի հետ մաս կը կազմէ կեդրոնական վարչութեան կից գործող այն յանձնախումբին «որի նպատակն էր հրատարակել ընկերավարութեան վերաբերեալ ժողովրդական գրքոյկներ հայերէն լեզուով» (4)

Սակայն Զաքարեանի տարերքը Արեւմտահայաստան մեկնիլ եւ գործնական պայքարին մասնակցելն էր: Երբ Ա. Նազարէկ Զաքարեանին կ'առաջարկէ կազմակերպչական նպատակներու համար Ռուսաստանի հայաշատ քաղաքները մեկնիլ, «Զաքարեանը (Լեւոն Բարսեղեան) բացարձակապէս յայտարարեց, որ ուզում է գործել միայն թրքահայ գաւառներում. դա նրա կեանքի նպատակն է եւ այդ մտքով այնտեղ գործելու համար է նա պատրաստում իրեն» (5)

Խօսքէն անցնելով գործի, 1892ի ամառնային արձակուրդին, Բ. Զաքարեան ժընեւէն կը մեկնի Աթէնք՝ ուր հաստատուած էր Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան գրասենեակը ու կ'առաջարկէ Թրքահայաստան մեկնելու իր պատրաս-



Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

www.massisweekly.com
updated every Friday

ԶԿԱՅ ՄԵԿԸ . . .

ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ Գալիֆոռնիայի Հայ Գրողների Միութեան Անդամ

Կլենտելյուսմ հրատարակուող «Հայ Կեանք» լրագրի թիվ 1327 համարում հրատարակուել էր մի գրութիւն՝ «Վարչապետը ընդամենը ծառայում է օլիգարխների շահերին» վերնագրով: Նախկին վարչապետ, Ազգային ժողովի «ՀԱԿ» խմբակցութիւնից պատգամաւոր՝ Հրանդ Բազրատեանը, «Ազատութիւն» Ռատիօ Կայանի կողմից անցկացուած «Երես-բուկ» (Facebook)-ի ասուլիսում քննադատութեան է ենթարկել Հայաստանի գործող վարչապետի վարած տնտեսական քաղաքականութիւնը: Այդ առթիւ լրագրողի հետ տեղի ունեցած իր հարցազրոյցի մանրամասնութեան տուեալները կազմում են այդ գրութեան բովանդակութիւնը:

Գրութեան վերջնամասում, Հրանդ Բազրատեանին ուղղուած այն հարցին, թէ 2013 թուականին Հայաստանի Հանրապետութիւնում կայանալիք նախագահական ընտրութիւններում ո՞ր թեկնածուին կը սատարեր, պատասխանել է՝

«Ես ասել եմ, որ եթէ Տէր-Պետրոսեանը դնի թեկնածութիւնը կը պաշտպանեմ: Ինչ վերաբերում է մնացածին, ՉԿԱՅ ՄԵԿԸ, որին ինձնից բարձր համարեմ: Ուստի ես չեմ փնտռում նրան, ում պիտի պաշտպանեմ»:

Արմա, Արմէ, Արմէն արեւոր-դի Հրանդ, հազար-հազար տարիների Ար-երի Արիական ցեղի շառաւիղ, քու արեւ հոգու տաճարում, քու սրտի արեան ծովակներում չ'ի հանգել քու նախնիների մեծամտութեան կրակ ծիրի լոյսը: Արմէն-հայերի «Պատմութեան Հայր»-ը՝ Մովսէս Խորենացին, իր Մատենանի «Ողբ . . .» գրութեան հատուածում պարսակել է նաեւ «Ժողովրդականներ»-ի անբարտաւանութիւնը, պարծենկոտութիւնը, մեծամտութիւնը, որոնց արարքները բացասաբար են անդրադարձել երկրի կառավարման բնականոն ընթացքին: Արարչական Արմէն-հայերի դիմադրելու, գոյատևելու, այրուելուց, մոխրանալուց յետոյ նորէն շէնանալու, ստեղծագործելու, արարելու ծիրների հետ հազար-հազար տարիներ յետոյ էլ իր հետ տարաւ նաեւ ամբարտաւանութեան, մեծամտութեան, պարծենկոտութեան անափառութեան պաշտամունքը: Իմը, միայն «Իմս» է ասում էին, ասում են ամբարտաւան, շուռայտած «Հայեր», ոչինչ թէ իրենց դրացին, համաքաղաքացին, համերկրացի ազգակիցը տուայտում է ոչ միայն աղքատութեան այլ նաեւ չքաւորութեան ճիրաններում:

Հայերին թմրացրին անկախութեան ու ազատութեան կանչերով, տարան կուռի: Իրենք էլ, պաշտօնական աթոռներին բազմած, գողացան, յափշտակեցին նրանց եօթանասուն տարիների արարածը: Պարսպապատ դղեակներ պատեցին, նրանց բակերում մատուռներ, աղօթելու ո՞ւմ եւ ինչո՞ւ համար, մեղքերի թողութեան համար, սակայն ո՞վ պիտի ների նրանց . . . : Հայաստան, Երեւանի ու շրջկեդրոնների փողոցներով քայլելիս մի պահ կանգնում, բացականչում էի, թէ այդ դղեակների տիրակալները արդեօք չ'էի՞ն ամաչում անցորդներին, որ գողութեամբ, իրենց վարած գործատե-

ղերի աշխատողների աշխատանքի շատ ցածր, երբեմն նոյնիսկ չնչին դրամական վարձատրութեան շնորհիւ էին կառուցել այն եւ որ նրանց տէրերը ստահակներ, գողեր, աւագակներ են: Յաղթանակի կամուրջ տանող փողոցի վրայ խոյացած հսկայ, ապակեպատ կառուցի մօտիկով անցնելու ատեն բարեկամիս հարցրեցի՝ «Այս շինութիւնը որինն է, ինչպէ՞ս է այդ հսկան կառուցել, ասա, պիտի գնամ սպաննեմ նրան» բացականչեցի խիստ զայրացած:

Ես եմ միայն, որ կամ այս երկրում բացականչում են «Հրանդ»-ը, եւ ուրիշ շատ հայածիններ: Նրանք մոռացել, թէ՞, չեն իմանում, որ իրենց պաշտած Աստուածը կանչել էր իր արարած Առաջին Մարդուն՝

«Ես եմ որ է -ն կը մոնչար հպարտս Աստուած վիրաւոր . . .»: Նա է միայն «Մէկ»-ը, ուրիշ ոչ մի նրա արարած «հողածին»

Չէ, դու, դուք չէք հայոց աշխարհի «Մէկ»-ը, Արմէն-հայերն են նրա տէրը . . . : Ձեր ճանապարհին կանգնած բազում իմաստուն տղաներ կան, նրանք գալու են վունտեն ձեզ, ձեր պալատներն էլ դպրոցներ ու մանկապարտէզներ լինեն: Յիշո՞ւմ էք այն մեծ ու քանքարաւոր Հային, որ բերիք վարչապետ կարգեցիք, չենթարկուեց, սկսեց իմաստուն կառավարել երկիրը, չհանդուրժեցիք, յետոյ էլ ծեծեցիք ու ետ Մեծն Բրիտանիա դրկեցիք: Տեսէք թէ հիմա նա ինչպիսի գնահատանքի, ինչպիսի բարձր պաշտօնական դիրքի են արժանացրել նրան, Արմէն Սարգսեանն էր նա, ամօթ ու նզովք ձեզ...:

Իննտունականների սկզբներին տեղի էին ունեցել Հայաստանի Հանրապետութեան Խորհրդարանի պատգամաւորական ընտրութիւններ: Երեւան քաղաքի Նոր Արէշ թաղամասում բնակուող, իմ պաշտօնավարած գրասենեակի աշխատակցուհին աշխատանքի ներկայանալով տեղեկացրել էր, որ իրենց թաղամասի շրջանի ընտրական տեղամասում իր թեկնածուութիւնը առաջադրած Հրանտ Բազրատեանը, պատգամաւոր ընտրուելու համար բաւարար քուէներ չի ստացել: Ձայրացած դիմել էր թաղամասի բնակչութեանը, կշտամբելով նրանց յայտարարել, որ թէեւ չէին քուէարկել իր օգտին, սակայն ակախատես պիտի լինէին թէ ինչպէս Հանրապետութեան ազգընտիր նախագահը նոր կազմակերպուած կառավարութեան կազմում ինչպիսի բարձր պաշտօնի էր առաջադրուելու իրեն:

Եւ իրապէս, ժողովուրդի վատահուստութիւնը չվաչելովին նշանակել էին կառավարութեան «էկոնոմիկայի», տնտեսութեան, նախարար եւ յետոյ էլ վարչապետ: Նա արդեօք չիշո՞ւմ է այդ, թէ մոռացել է: Երեւի այն ժամանակ էլ Հայաստանում իրենից բացի «Մէկը Չկար»...: Բարոյական է, որ մարդ մի պահ ետին նայի, անցեալը մտաբերի: Անշուշտ, հիմա էլ երեւի իրենից բարձր մէկը չկայ, սակայն Ազգային ժողովում պատգամաւոր է դարձել համամասնական ընտրակարգով եւ ոչ թէ ուղղակի իրեն տրուած քուէների արդիւնքով, ապա թէ ոչ հաստատ նորէն չէր ընտրուելու...:

1997 թուական, Հայաստանի նախագահով, սպարապետով, մե-

ծամեծներով շարասիւն կազմած հասել էին Արցախի մայրաքաղաքի՝ Ստեփանակերտի, դարպասներ: Քաղաքի ժողովուրդը զարմանքով էր դիմաւորել նրանց: Ամբողջ քաղաքն էր ոտքի, ի՞նչ է պատահել հարցրել էին միմեանց: Արցախի նախագահական պալատ, բարեկամական, ուրախ մթնոլորտում հանդիպում էր կայացել: Հայաստանի սպարապետը դիմել էր Ազգային ժողովի նախագահին, վարչապետին, քաղաքապետին, Ազգային ժողովի պատգամաւորներին, որ Հայաստանի վարչապետի թափուր պաշտօնի համար նպատակաշարժար էին համարել իրենց նախագահին տանել Հայաստան՝ վարչապետի պաշտօնին նշանակելու: Հարցրել էին, թէ ինչո՞ւ նման նշանակում էին կանխատեսել: Պատասխանել էին, որ նա կամքով ու ժեղ անձնաւորութիւն է, գործուն մասնակցութիւն ունեցել Արցախի ազատագրական պատերազմի յաղթանակին եւ որ Արցախի բանակցութիւնների գործընթացին անմիջական մասնակցութիւն ունենալու համար մտադրուել էին իրենց նախագահ՝ Ռոբերտ Քոչարեանին Հայաստանի կառավարութեան վարչապետ նշանակել: Խորհրդակցութեան Արցախի մասնակիցները մի պահ տարակուսանք էին յայտնել նման պաշտօնին նրա նշանակմանը, այսուհանդերձ յայտարարել իրենց համաձայնութիւնը, կասկած յայտնելով նաեւ, որ նման բարձր պաշտօնի նշանակումով կը տանէք ու կը փճացնէք նրան:

Ռոբերտ Քոչարեանին բերին Հայաստան, նախագահի հրամանագրով նշանակուեց Հայաստանի Հանրապետութեան վարչապետ: Քոչարեանը, թիկունքը «ամուր ու տաք» պահելու համար, կառավարութեան տարբեր բաժանմունքներին եւ այլ գերատեսչութիւններին թափուր պաշտօնների համարման համար իր հերթին ինքն էլ Արցախից բերեց ու նոյն պաշտօնների համար պիտանի ու ոչ պի-

տանի մարդկանց լցրեց ոչ միայն կառավարութեան տարբեր բաժանմունքներ, այլեւ որտեղ որ պատահէր: Մէկ տարի յետոյ էլ սպարապետի, Ազգային Անվտանգութեան Կոմիտէի ազգակից պետի հետ «Պալատական Յեղաշրջում» կատարեցին, ստիպեցին գործող նախագահին հրաժարական ներկայացնելու:

Հայաստանում նախագահական նոր ընտրութիւններ: Վարչապետ Քոչարեան ընտրուեց հանրապետութեան նախագահ: Ինչպէս որ Արցախում պատգամել էին, իրապէս «փճացրել» էին նրան: Կառավարեց ինքնակալի նման, ուրիշների անուշով տիրացաւ բազում արտադրական ձեռնարկութիւնների, «Բիզնես» են ասում Հայաստանում: Բարձրաձայն, շուրկով ասում են շատ դրամ ունի, ինչ իմանամ, ո՞վ է հաշուել, ես որպէս արհեստավարժ գլխաւոր տոմարագէտ-տոմարակալ մինչեւ չհաշուեմ չեմ հաւատայ, ո՞վ թոյլ կը տար ինձ այն հաշուելու . . . : Ամբարտաւանացաւ, պարծենկոտացաւ եւ մի առիթով էլ յայտարարեց, որ երկրում իրենից բացի տղամարդ չկայ, ով որ տղամարդ է թող դէմը դուրս գայ: Այս Արմէն-Հայ արեւորդի ծիներում էլ չի մարել իր նախնիներից ժառանգած ծինը, եւ դեռ նման ինչքաններ կան . . . :

Այսպէս, Հայը իր նախնիներից ժառանգած իմացական (Intellectual), արարման, ստեղծագործական, յամուռութեան, գոյատևման ծինների հետ ժառանգել է նաեւ ամբարտաւանութեան յուրի ծինը, որը շատ յաճախ աղէտի պատճառ է հանդիսացել իրենց աշխարհին: Երգել էին, որ «Սթամպուլը արեան ծով կը լինի», սակայն Սթամպուլի փողոցներով Արմէն-Հայերի արարչական սրբազան արիւնը հոսեց, Հայկական Սրբազան Լեռնաշխարհում արեւը նոյնիսկ կարմիր հագաւ: Ափսոս, ինչո՞ւ այդպէս եղեւ...:

Nor Serount Cultural Association
Proudly Presents

Love Armenia Օրիէ' Հայաստանը

BENEFIT CONCERT

For Armenian Youth Groups dedicated to honoring Armenian Heritage & Culture



Min Jung Park (International Concert Violinist)
Yin Yin Huang (International Concert Pianist)
Ling Yan (International Concert Cellist)

Sunday, October 14, 2012

Noor - Sofia Ballroom
200 E. Colorado Blvd., Pasadena, CA 91101

4:00-5:00 pm : Social Hour
5:00-6:30 pm : Concert

Hors d'oeuvres, wine, desserts, coffee, tea will be served
90 minutes free parking with validation.



Razmik Mansourian (International Singing & Recording Artist)



Carl Matthes (International Concert Pianist)

General Admission \$30.00
Tickets & Reservations: www.itsmyseat.com/floor



**THE ARAB AWAKENING,
THE TURKISH ROLE,
AND THE FUTURE OF
ARMENIANS IN THE
MIDDLE EAST**



AGBU Asbeds cordially invite you to

**“An Evening with
an Ambassador”**

Speaker:

**The Honorable
Edward P. Djerejian**

Edward P. Djerejian served in the U.S. Foreign Service for eight presidents, from John F. Kennedy to William J. Clinton (1962-1994), as assistant secretary of state for Near Eastern affairs in both the George H.W. Bush and Clinton administrations, as well as U.S. ambassador to Israel and the Syrian Arab Republic. His book, “Danger and Opportunity: An American Ambassador’s Journey Through the Middle East,” was published in Sept. 2008. Djerejian has been awarded numerous honors including the Presidential Distinguished Service Award, and in 2011, was elected a fellow of the American Academy of Arts and Sciences and named to the board of trustees of the Carnegie Corporation of New York.



Friday October 5, 2012 at 7:30 pm
AGBU Vatche & Tamar Manoukian Center
2495 East Mountain Street
Pasadena, CA 91104

Question-Answer session will follow the lecture.

For more information, call: **626.794.7942**
 Or email: asbeds@agbuca.org

FREE ADMISSION

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 500 - ԱՄԵԱԿԸ ԵՒ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ՏՊԱՐԱՆԻ ԴԵՐԸ


ԱՐԱՄԱՅԻՍՄԻՐԶԱԽԱՆԵԱՆ

Հայ գրքի տպագրութիւնը

Մեծ պատիւ է ցանկացած ժողովրդի համար լինել առաջադէմ մարդկութեան առաջին շարքերում եւ յամարուել մտքի, լուսաւորութեան ու մշակոյթի տարածման ասանգարը ժողովուրդներից մէկը:

Այս յօդուածը գիտական ուսումնասիրութիւնն է, այլ խօսք ու յիշողութիւնն է հայ ժողովրդի համար պատմական նշանակութիւն ունեցող մշակութային կենտրոններից մէկի՝ Նոր Զուղայի տպարանի մասին:

Յիշենք տպագրութեան արուեստի ու արհեստի հիմնադիր, մեծ գիւտարար Եոհան Գուտենբերգ -ի մասին: Johann Gutenberg - Greatsite.com



Յակոբ Մեղապարտ - LitoPedia
ՅԱԿՈՒՐ ՄԵՂԱՊԱՐՏ (Զուղայեցի) - Հայ տպագրական արուեստի սկզբնաւորողն ու հիմնադիրն է: Վենետիկում պատուիրել է ձուլածոյ տառեր, գարգազեր եւ 1512-1513թթ. հրատարակել հայտառ 6 գիրք: Նրա հրատարակումներից մեզ են հասել հայերէն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրք»-ը եւ եւս չորս գիրք՝ «Պատարագատետր», «Աղթարք», «Պարզատուժար», «Տաղարան»:

Հայ տպագրութեան արուեստը համեմատաբար արագ տարածւում է աշխարհի տարբեր երկրների հայաշատ քաղաքներում:

Համացանցային հետեւեալ հասցէներով կարող էք կարգաւ արժէքաւոր տեղեկութիւններ այս մասին: (Յօդուածի մէջ օգտագործուած է որոշ նիւթեր բերուած աղբիւրներից):

Հայ գրքի տպագրութիւնն հիմնադիրները, նշանաւոր հրատարակիչներն ու տպարանները:

Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքը (Իրան)

ԽԱՋԱՏՈՒՐ ԿԵՍԱՐԱՅԻՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՅ ՎԱՆՔՈՒՄ 1638-ին հիմնել է տպարան եւ տպագրել մի սաղմոսարան: 1641-ին լոյս է ընծայել 703 էջից բաղկացած «Հարանց վարք», 1642-ին՝ «Ատենի ժամագիրք» գրքերը: 17-րդ դարի երկրորդ կեսից տպարանը գործել է ընդմիջումներով: Բեղմնաւոր գործունէութիւնը շարունակել է 1880-ից յետոյ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՒՂԱՅԵՅԻՆ Տպագրական արուեստի մէջ կատարելագործուելու եւ Նոր Զուղայի տպարանի համար սարքաւորումներ ձեռք բերելու նպատակով 1639թ. մեկնել է Եւրոպա: 1644թ. Լիվոռնոյում (Իտալիա) հրատարակել է «Սաղմոս Դաւթին» գիրքը, 1647թ. Նոր Զուղայում՝ իր «Պարզատուժար Ազարիայրի» աշխատութիւնը եւ նախաձեռնել Աստուածաշնչի հայերէն հրատարակում: Սակայն դժուարութիւնների պատճառով նրա մտայղացումը չի իրագործուել:

Ոսկան Երեւանցի

Ոսկան Երեւանցի (նաեւ՝ Ոսկան Զուղայեցի, 1614, Նոր Զուղա, Սպահան, - 1674թ. Փետրուարի 4, Մարսել, Ֆրանսիա) - հայ մշակութային գործիչ, տպագրիչ, լեզուաբան: 1666-68թթ. Ամատերդամում տպագրել է հայերէն Աստուածաշունչ մատենար, որը համարուում է հայ հին տպագրութեան լաւագոյն նմուշներից մէկը: Մինչեւ 1669թ.

լոյս է ընծայում Մովսէս Խորենացու «Աշխարհացոյց»-ը, Առաքել Դաւրիժեցու «Գիրք պատմութեան»-ը, Վարդան Այգեկցու առակները եւ այլն: Տպագրական գործունէութիւն է ծաւալել նաեւ Լիվոռնոյում եւ Մարսելում:

ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՅԻՆ ծնուել է Նոր Զուղայում, Երեւանցի է անունուել ծնողների ծննդավայրի անունով:

1666թ. ստանձնել է Ամատերդամի հայկական տպարանի տնօրինութիւնը: Նախ հրատարակել է «Այբբենարան եւ քրիստոնէական» հայոց լեզուի եւ կրօնի դասագիրքը, ապա սկսել է 1464 էջից բաղկացած հայերէն առաջին «Աստուածաշունչ» մատենար հրատարակումը եւ աւարտել 1668-ին: Այդ ժամանակահատուածում լոյս է ընծայել եւս 12 անուն գիրք՝ «Նոր կտակարան», Այգեկցի՝ «Աղուեսագիրք», Խորենացի՝ «Աշխարհագրութիւն» եւ այլն: Աստուածաշնչից յետոյ նրա կարեւոր հրատարակումներից է «Ձայնաքաղ շարական» խազագիր ձայնանիշերով հայերէն առաջին տպագիր գիրքը: 1670-1671թթ. Լիվոռնոյում (Իտալիա) հիմնել է տպարան եւ հրատարակել 2 անուն գիրք: 1672-ին տպարանը տեղափոխել է Մարսել, սակայն հալածուելով կաթոլիկ եկեղեցու կողմից եւ չզիմանալով տառապանքներին, մահացել է 1674-ին: Նրանից յետոյ տպարանը ընդմիջումներով գործել է մինչեւ 1683 թուականը:

Առաքել Դաւրիժեցու «Գիրք պատմութեան»-ը, առաջին անգամ լոյս է տեսել ղեռնէս հեղինակի կենդանութեան օրօք՝ 1669-ին, Ամատերդամում, Ոսկան Երեւանցու աշխատասիրութեամբ: 1990թ. լոյս է տեսել երկի քննական հրատարակութիւնը: Գիրքը թարգմանուել է ֆրանսերէն (1874), ռուսերէն (1973), լեհերէն (1981), հատուածաբար՝ վրացերէն (1974):

Ոսկան Երեւանցին, Նոր Զուղայի հայոց տպարանի մեծ երախտաւորներից է, նա երկար տարիներ դժուարին աշխատանքներ է տարել տպարանի զարգացման ու կատարելագործման ուղղութեամբ: Ոսկան Երեւանցու կեանքին ու տպագրական գործունէութեանը լայնօրէն անդրադարձել է հայ գրող-վիպասան Յովհաննէս Զուկասեանը: Նրա «Ոսկան Երեւանցի» պատմավէպը մի խօսող յուշարձան է նուիրուած հայ տպագրութեան մեծ երախտաւորին: Յ. Զուկասեանը իր երկհատոր «Բողոքան Սալթանով» աշխատութեան մէջ նոյնպէս մեծ տեղ է յատկացրել տաղանդաւոր լեզուաբանին ու տպագրիչին:

Բողոքան Սալթանովը (Աստվածատուր Սալթանյան)՝ Նոյնպէս մեծ աւանդ ունի Նոր Զուղայի տպարանի աշխատանքներում: Նկարիչ, ոսկերիչ ու քանդակագործ Բողոքան Սալթանովը մինչ Թուրքիայի մեկնելը, Նոր Զուղայի այլ արուեստագետ նկարիչների՝ Մինասի, Մարքուգի... հետ մեծածաւալ արուեստի գործեր է կատարել

Իրանի շահանիստ Իսֆահան քաղաքում:

Տողերիս հեղինակին բարեբաստիկ բախտ վիճակուեց աշակերտելու Նոր Զուղայի տպարանում: Տասնչորս տարեկան հասակում դպրոցական ամառային արձակուրդների ժամանակ ես յայտնուեցի սուրբ Ամենափրկիչ Վանքի տարածքում գտնուող Նաչատուր Կեսարացու հիմնադրած տպարանում: Հայրս ինձ յանձնեց տպարանի տեսուչ ու վաստակաւոր տպագրիչ Մկրտիչ Հայրապետեանին, որպէսզի աշակերտեմ եւ մի բան սովորեմ կեանքի համար: Մկրտիչ Հայրապետեանին Տիրացու էին կոչում նոր Զուղայում, քանզի նա տպարանի աշխատանքների հետ համատեղ կատարում էր տեղի Սուրբ Սարգիս եւ Ամենափրկիչ եկեղեցիների ժամկոչի պարտականութիւնները: Մէկ բախտաւորութիւն էլ ունէի, որ Տիրացուն իմ փեսայի հայրն էր եւ բարեկամաբար էր վերաբերում իմ կատարած սխալներին:

Առ այսօր յիշում եմ, թէ Տիրացուն ինչպէս հանգամանօրէն ինձ ծանօթացրեց տպարանի սարքաւորումների հետ: Լայն տարածքով, բարձր առաստաղով շէնքի ամենալուսաւոր մասում տեղադրուած էր տպագրական մեքենան: (նկար 1, Տիրացուն թուղթ է մատակարարում, իսկ աշակերտողը պտտում է թափանխը): Փայտեայ արկղների մէջ խնամքով դասաւորուած էին տարբեր չափերի հազարաւոր ձուլուած հայերէն ու

Եոհան Գուտենբերգ



Եոհան Գուտենբերգ (մօտ 1398 - Փետրուարի 3, 1468)՝ գերմանացի դարբին, ոսկերիչ եւ գիւտարար, ով յայտնագործեց ժամանակակից գրքի տպագրութեան տեխնիկան: XV դարի կէսերին նա ստեղծեց իր շարժական տպագրահաստոցը, որը հիմք դրեց տպագրական յեղափոխութեանը Եւրոպայում լայնօրէն համարուում է արդի ժամանակի կարեւորագոյն յայտնագործութիւններից մէկը:

Երկար ու յամառ աշխատանքներից յետոյ, նա ստեղծեց մետաղից առանձին լիտերներ (տառեր) ձուլելու եղանակը՝ գիւտարարը դրանցով կազմում էր շարուածքի էջեր ու տողեր, որոնցից արտասպուլածք էր անում թղթի վրայ: Շարժական տպատառերի օգնութեամբ հնարաւոր էր շարել ցանկացած բնագրի ուզած քանակութեամբ էջեր: Գուտենբերգը յայտնագործեց նաեւ տպագրահաստոցը:

Մօտաւորապէս 1445 թուականին Գուտենբերգը հրատարակեց Եւրոպական առաջին տպագիր գիրքը: Դրանից յետոյ գրատպութիւնը Եւրոպայում սկսեց արագօրէն տարածուել: Նրա գիւտից կէս դար անց, Եւրոպայի քաղաքներում գործում էին 1100 տպարան: Գրադարանների գրադարակները լցուում էին Եւրոպական բոլոր լեզուներով տարբեր բնագաւառների գրքերով: Բացի դրանից, գրքերի գինը այլեւս այնքան թանկ չէր, որքան ձեռագիր գրքերինը:

1568 թուականի տպագրահաստոցն ունէր մէկ ժամում 240 պատճէնի արտասպուման հնարաւորութիւն:

Գուտենբերգի ամենարժէքաւոր տպագրած գիրքը Գուտենբերգի Աստուածաշունչն է, որը բարձր է գնահատուում իր գեղագիտական եւ տեխնիկական որակի համար:



նաեւ պարսկերէն ու լատին տառատեսակները: Տիրացույի առաջին ցուցմունքը եղաւ. «- Ուշադիր կը լինես, տառերը չխառնես, քանզի տառ շարելու ժամանակ բազմաթիւ սխալների պատճառ կարող է դառնալ այդ»:

Անխօս լսում էի Տրացուին ու մտքումս մտածում էի, տեսնես իմ գործը ինչ է լինելու այստեղ... Տպարանի տարածքում առանձին սենեակում տեղաւորուած էր հսկայական չափերով թուղթ կտրող դանակ-սարքը: Մեծ սրահում երկար ու լայն փայտեայ սեղանների վրայ դրուած էին տարբեր չափերի փայտեայ մամլիչներ, գիրք կազմելու տարբեր հարմարանքներ ու մագաղաթներ նորոգելու յատուկ բաժին: Առաջին իսկ հայեացքից

ԱՌԱՏԱԶԵ՞ՌՆ ԵՍ...

Թերեւս դուն ժահէզի «Կծծի-ները» գիրքէն չես յառաջացած, սակայն անձնասիրութիւնը քեզ կը կասեցնէ՝ պէտք եղած պահուն ու-րիշին օգնութեան ձեռք երկարելէ: Ձեռնբացութիւնը նուէրներով չի կրճատուիր եւ առատաձեռնութիւնը նիւթական նուէրներով չի սահմա-նափակուիր: Ժլատ անձը կծծիու-թիւն կ'ընէ ոչ միայն իր դրամով, այլ ուրիշին հանդէպ իր զգացում-ներով նաեւ՝ նոյնիսկ իրեն շատ մօտ եղող անձերուն:

Շատ օրինակներ կը վստա-հեցնեն, թէ կծծի անձը իր ընտա-նիքի անդամներուն եւ բարեկամ-ներուն հետ բացասական վերաբե-րում կ'ունենայ, որովհետեւ ան իւրաքանչիւր քայլ կը չափ է եւ իւրաքանչիւր վարուելակերպ կը կշռէ: Հետեւաբար, ան ամուր կը կառչի իր աշխարհին եւ աստիճա-նաբար կը խեղդուի իր առանձնու-թեան մէջ, պարզապէս որովհետեւ միակողմանի իրեն կ'ապահովէ որեւէ տեսակի յանձնառու չըլլալու հաւանականութիւնը, մանաւանդ նիւթական տեսակի պարտաւորու-թեանց:

Հագուադէպ կը գտնենք ան-ձեր, որոնք իսկապէս կը վայելեն բարոյական առատաձեռնութիւն, այն աստիճանի, որ այս անձերը ձեռք կ'երկարեն իւրաքանչիւր «օգ-նութիւն» կանչողին:

Այսպիսով, իսկական առատա-ձեռնութիւնը կը բխի սրտի խոր-քէն եւ հօր մարդասիրութենէ, որովհետեւ այդ սիրոյ ծնունդն է:

Սակայն հարկ է ուշադիր ըլ-լալ՝ անձի մը բարոյական առատա-ձեռնութիւնը չչափազործել:

1) Նոր պաշտօնեացի մըն ես եւ գործատեղին մէջ գտնուող հին պաշտօնեաները դրամ կը հաւա-քեն՝ ասպարէզը ձգող պաշտօնեացի մը նուէր գնելու: Կը մասնակցի՞ս իրենց:

Ա) Ոչ, որովհետեւ դուն նոր ես եւ կապ չունիս այս հարցին հետ: (0)

Բ) Պզտիկ գումարով մը կը մասնակցիս: (1)

Գ) Ինչպէս միւս պաշտօնեա-ները, դուն ալ կու տաս պահանջ-ուած գումարը: (3)

2) Ճամբորդութենէդ վերա-դարձին, որո՞ւն նուէր գնած կ'ըլ-լաս:

Ա) Ոչ մէկ նուէր, որովհետեւ ամբողջ դրամը ծախսած կ'ըլլաս անձնական պէտքերուդ համար: (1)

Բ) Միայն ընտանիքիդ ան-դամներուն եւ մօտիկ բարեկամնե-րուդ: (2)

Գ) Շուրջդ գտնուող բոլոր անձերուն մօտաւորապէս: (3)

3) Մննդականոնի հետեւելով քանի մը քիւրկրամներ կորսնցնելէ ետք կը նկատես, թէ լաթերդ քեզի յարմար չեն այլեւս: Եթէ ծանօթ-ներէդ մին խնդրէ անոնց մէջէն իրեն յարմար եղածները առնել, ի՞նչ կ'ըլլայ վերաբերմունքդ:

Ա) Կը պահես հագուստը, որով-հետեւ կը փափաքիս նեղցնել ու հագնիլ: (1)

Բ) Այդ հագուստը կը նուիրես անոր: (3)

Գ) Հագուստին գինին կէսը կը խնդրես իրմէ: (2)

4) Երբ ճաշարան երթաս, աւելորդ դրամ կը ձգե՞ս սպասեա-կին:

Ա) Ոչ, ստիպուած չես, որով-հետեւ իւրաքանչիւրը իր ամսակա-նը կը գանձէ: (1)

Բ) Երբեմն: (2)

Գ) Այո, միշտ: (3)

5) Բարեկամ/բարեկամուհի-իդ հետ կը ծրագրես ճամբորդել, սակայն ան չի կրնար դրամ ապահովել: Ինչպէ՞ս կը վարուիս:

Ա) Առանց տատամսելու կ'առա-ջարկես դուն վճարել պէտք եղած ծախսը: (3)

Բ) Կ'առաջարկես նուազ ծախ-սով ճամբորդութիւն մը կատարել: (2)

Գ) Իրեն կը քաջալերես փոխ դրամ առնել: (1)

6) Բարեկամ/բարեկամուհի-իդ գաւակին տարեդարձն է: Ա-նոր կը հարցնես փափաքած նուէրին մասին եւ ան սուղ խաղա-լիքի անունը կու տայ: Ի՞նչ կ'ընես:

Ա) Նուազ արժէքով նուէր մը կը գնես, որպէսզի անոր դաս ըլլայ դրամին արժէքը գիտ-նալ: (0)

Բ) Խաղալիքը գնելու փոխա-րէն, խաղալայր կը տանիս գինը: (1)

Գ) Իրեն կը նուիրես իր երա-զած խաղալիքը: (3)

7) Կ'իմանաս թէ հետդ աշխա-տող պաշտօնեան քեզի մօտ շրջան մը կը բնակի եւ ամէն օր հանրա-կառքով կ'երթայ գործի:

Կ'առաջարկե՞ս ինքնաշար-ժովդ փոխադրել գինը:

Ա) Դուն չես առաջարկեր, սակայն չես մերժեր եթէ ինք առաջարկէ, պայմանաւ որ վառե-լանիւթի ծախսերուն մասնակցի: (1)

Բ) Չես տատամսիր այդ գա-ղափարը առաջարկելու: (3)

Գ) Դուն կ'առաջարկես գաղա-փարը, պայման դնելով ծախ-սերուն իր մասնակցութիւնը բերել: (2)

8) Եթէ բարեկամ/բարեկա-մուհիդ խնդրէ թանկարժէք լու-սանկարչական գործիքը գործածել իր գաւակին տարեդարձին հա-մար, ինչպէ՞ս կը վարուիս:

Ա) Առանց տատամսելու հա-մաձայն կը գտնուիս: (3)

Բ) Կը համաձայնիս, պայմա-նաւ որ դուն անձամբ նկարես հաւաքոյթը: (2)

Գ) Համաձայն կը գտնուիս, պայմանաւ որ եթէ որեւէ վնաս հասնի գործիքին՝ իրենք կը նորո-գեն զայն: (1)

ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ

* Եթէ հաւաքած ես 5-էն 11-ի միջեւ կէտեր.- Բնակարկութեամբ առատաձեռն չես դուն, սակայն ամէն ջանք կը թափես այդ յատ-կութիւնը վաստակիս՝ որպէսզի քեզի կծծիութեամբ չամբաստանեն: Քե-զի համար դժուար է առատաձեռ-նութեան ոճը կիրարկել, սակայն կը վայելես խելացութիւն, որուն միջոցով կրնաս գանազանել կծծի-ին եւ առատաձեռնին հանդէպ ու-րիշ ունեցած մօտեցումին տարբե-րութիւնը: Վստահ եղիւր, որ ձեռն-բացութիւնը ոչ միայն ուրիշը կ'ուրախացնէ, այլ նաեւ քեզի ու-րախութիւն կը պատճառէ, որով-հետեւ տալու հաճոյքը կը գերա-զանցէ առնելու հաճոյքին:

* Եթէ հաւաքած ես 12-էն 18-ի միջեւ կէտեր.- Դուն առատա-ձեռն ես այն աստիճանի, որ բնաւ չես տատամսիր դրամական նուիր-ատուութիւններ ընելու: Սակայն կրնաս կծծիութիւն ընել ժամանա-կիդ նկատմամբ, որովհետեւ շատ զբաղած կ'ըլլաս:

Երբեմն պահանջուածը միայն

ԻՆՉ ՍՈՐԿԵՑԱՅ...

* Սորվեցայ, որ մարդ արարածը պէտք է աստղերուն հասնելու երազէ, բայց միաժամանակ պէտք է մոռնայ ոտքերը գետնին վրայ ձգել:

* Սորվեցայ, որ կարելոր չէ թէ ես հիմա ուր կը գտնուիմ, այլ կարելորը՝ դէպի ուր կ'ուղղուիմ:

* Սորվեցայ, որ անհատի մը համար աւելի լաւ է կրեայ մը ըլլալ ճիշդ ճամբուն վրայ... քան եղնիկ մը՝ սխալ ճամբուն վրայ:

* Սորվեցայ, որ շատ անգամներ կուրծի մը մէջ պարտուիլը կը սորվեցնէ պատերազմը յաղթել:

* Սորվեցայ, որ շատ պէտք չէ կեղերոնանանք հովին եկած ուղղութեան վրայ, այլ՝ թէ ինչպէս կրնանք առազատը հակակշռել այդ միջոցին:

* Սորվեցայ, որ յաջողութեան բանալին «եթէ» եւ «բայց» բա-ուերը չի պարունակեր:

* Սորվեցայ որ չակնկալուած պզտիկ նուէր մը շատ աւելի ազդեցութիւն կը ձգէ քան ակնկալուած սուղ մեծ նուէր մը:

* Սորվեցայ, որ ոսկիին տեսակը ստուգելու համար զայն կրակէ կ'անցընեն:

* Սորվեցայ, որ կարգ մը մարդոց գոհացնելը անկարելի է: Եթէ 1000 հատ մոմ վարես իրեն, կը հարցնէ 1001-րդին մասին:

* Սորվեցայ, որ վստահութիւն կերտելը տարիներու կը կարօտի, մինչ քան դու մը՝ քանի մը երկվայրկեանի հարց է:

* Սորվեցայ, որ պտղաբեր ծառն է որ մարդիկ հարուած կու տան:

ՄԵՆՆԻԼԸ ՈՐՔԱՆ ԴՇՈՒՄՐ Է ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Շարունակուած էջ 8-էն

քը: Ան կ'աղերսէր աշխատասէր դռնապանին, երկարօրէն նկարագ-րելով իր մահն ու յուղարկաւորու-թիւնը: Ս. Պետրոս կը կանչէ Գաբրի-էլը՝ բերելու համար Կենաց Տոմար ուր ախտաւորներու տեղեկագրու-թիւնները արձանագրուած էին, որոնց հիման վրայ Ս. Պետրոս կը յայտարարէ թէ մինչեւ որ իր ուղեղը չմեռնի, ինք չկրնար մտնել Դրախտ: Նաեւ, ան կ'ազդարարէ յամառ ձէյմս Արամեանին թէ կա-խարդանքը թոյլատրելի չէ, մատ-նանջելով դրոշմաթուղթի հաւա-քածօրին, Յեղասպանութեան վա-ւերաթուղթերուն եւ կանխիկ դրա-մին, զոր կը կրէր իր դրամապա-նակին մէջ դիւրացնելու համար դէպի Դրախտ իր մուտքը:

Յաջորդ տեսարանը դարձեալ Դրախտի մուտքին է, ուր բնակիչ-ներէն մին դուրս կու գայ եւ կը ճանչնայ սպասող ձէյմս Արամեանը որ իր նախկին ուսուցիչն էր եւ կը սկսի հետը խօսակցիլ: Օգնելու համար անոր ուխտին, ան խոր-հուրդ կու տայ իրեն աղօթել ոչ թէ Հայ Սուրբերու բարեխօսութեան, այլ՝ ուրիշ միջազգային ձայներու եւ խրատներու, որոնք ունին ուժեղ եւ արժանահաւատ միջոցներ:

Յաջորդ տեսարանը՝ ծան Հէ-լըրի գրասենեակին մէջ է որ տեղի կ'ունենայ, Հայու ուղեղով Ամերի-կացի գործատէրը, որ վերստացաւ իր առողջութիւնն ու մտային հմտութիւնը: Ան հրապուրուած է իր գեղեցիկ քարտուղարուհիով որուն հետ կ'ամուսնանայ: Այսու-հանդերձ, ան սկսած է արդէն

մտածել հայու նման, կ'երգէ Կիլիկի-իոյ փառաբանութեան երգը եւ իր մտահոգութիւնները Յեղասպանու-թեան ուրացման մասին լսելի կը դարձնէ: Իր տիկինը կը փորձէ արդի Rock երաժշտութիւն նուա-գելով ինչպէս նաեւ ճամբորդու-թեան ծրագրները առաջարկելով, միտքը խոտորցնել: Սակայն անոր ամուսինը յամառ է: Ան այցելած էր ձէյմս Արամեանի գերեզմանը եւ չարչարուած հոգիով դեզերած է թափառական ուրուականի մը նման, իր ուղեղին տէրը փնտռելով: Տագ-նապահար կողակիցը իր կենրոջը կը հեռաձայնէ օգնութիւն հայցե-լով: Մինչ այս վերջինը՝ կը փորձէ հանդարտեցնել զայն նուիրատու-թիւն մը խնդրելով իր նախասի-րած բարեսիրական հաստատու-թեան համար: Ան կը յայտնէ թէ արդէն նուիրած է \$50.000ի չափ գումար մը, Հայկական Դատին եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչ-ման համար:

Վերջին տեսարան անգամ մը եւս դէպի Դրախտ մուտքն է, ուր ձէյմս Արամեան կը շարունակէ պաշտպանել իր դատը: Վերջապէս, Ս. Պետրոս կը տեղեկացնէ իրեն թէ, ծան Հէլըր փախչած է տունէն, իրականութեան մէջ գինք փնտռե-լու, եզրակացնելով թէ, միայն երբ ծան Հէլըր մահանայ, ան կրնայ ընդունուիլ: Մինչ Ս. Պետրոս կը պատրաստուի իր ետեւէն Դրախտի դուռը փակել, բեմէն անդին Հէլը-րի ձայնն է որ կը լսուի Արամեանը կանչելով: Եւ մինչ արձագանքը կը հնչէ, Հայր Մերը կ'երգուի վարա-գոյրը վար իջնելով:

կատարելով: Ուշադիր եղիր առա-տաձեռնութեանէդ օգտուողներէն եւ զգոյշ եղիր շահագործուելէ: Ձեռն-բացութիւնը իմաստութեան պէտք ունի, նոյնիսկ եթէ այդ մէկը հա-շիւներու հետ չէ առնչուած: Յիշէ այս խօսքը. «Եթէ անարժանիին հանդէպ առատաձեռն ըլլաս, ան քու դէմդ կ'ըմբոստանայ»:

դրամ տրամադրել չէ, այլ բարոյա-կան առատաձեռնութիւն եւ զգա-ցական յանձնառութիւն: Առատա-ձեռնութիւնը իր մէջ կ'ընդգրկէ ամէն տեսակի տուհուրթիւնները:

* Եթէ հաւաքած ես 19-էն 26-ի միջեւ կէտեր.- Դուն անսահման առատաձեռն ես, նոյնիսկ կարգ մը պարագաներու՝ յիմարութիւններ

կատարելով: Ուշադիր եղիր առա-տաձեռնութեանէդ օգտուողներէն եւ զգոյշ եղիր շահագործուելէ: Ձեռն-բացութիւնը իմաստութեան պէտք ունի, նոյնիսկ եթէ այդ մէկը հա-շիւներու հետ չէ առնչուած: Յիշէ այս խօսքը. «Եթէ անարժանիին հանդէպ առատաձեռն ըլլաս, ան քու դէմդ կ'ըմբոստանայ»:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

«ՍԵԿԸ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՅ ԹԵ ԶԵ»

Շարունակում է 1-ին

Թեան մը տպաւորութիւնը կը թողնուի վրաս, հիմնականին մէջ այն պատճառաւ, որ Պրն. Նախագահը իր մեղադրական խօսքը կը հիմնաւորէր իր այն հաստատումին վրայ, ինչպէս պիտի ըսէ. «Մենք չորս տարի է քեզ հետ խօսում ենք Էս Թեմայով, չորս տարի ուղիղ, բայց պրոցէսները շարունակում են»:

Հակառակ չորս տարի է ի վեր վարչապետին հետ այս միութիւնը խօսած ըլլալուն՝ երբ «պրոցեսները» (հասկնալ՝ գործընթացները) կը շարունակուին, ապա՝ ի՞նչ բանը կ'արգիլէր Պրն. Նախագահին, որ վեճակն փայտէր առնէր երկրորդ տարին, պետական ապակաւացման առաջին առնելու համար, երբ մասն, ժողովրդական դժգոհութիւնը համընդհանուր երեւոյթ դարձած էր արդէն, սկսեալ՝ Ռոպերթ Քոչարեանի նախագահական տարիներուն իր վարչապետական իշխանութեան օրէն, մինչեւ մէկ տարի էն իր աւարտին հասնող իր նախագահական շրջանը:

Նախագահական նախընտրութիւններուն գուգադիպող նախարարական խորհուրդէն ներս, երկրի ապակաւացման վիճակին

կապակցութեամբ իր ցուցաբերած մտահոգութիւնը՝ դրական դոյզն տպաւորութիւն չի թողելէն ետք, ընդհակառակը՝ կեղծիքի ազդեցութեան տակ կը պահէ, ապրուստի տուայտանքի, անհեռանկարային ապագայի, ֆիզիքական անապահովութեան, իշխանութիւններու հանդէպ անվստահութեան, եւ անցողիկ արդարադատութեան յուսահատ տուայտանքներու տակ հիւժող ողջմիտ հայրենարմակ հասարակութիւնը:

Սպասուած չորս տարին մեղապարտ նախարարաց խորհուրդին, վարչապետին՝ նախագահական մեղսակցութեան ապացոյցը չէ, միթէ՞:

Պրն. Նախագահը՝ Պրն. Վարչապետին կատարած մեղադրանքներն ու կշտամբանքները կը վերջակէտէ հետեւեալ ծիծաղելի հարցադրումով.

«Մէկը դրա համար պատասխան պիտի տայ, թէ չէ»:

Մեր պատասխանը պիտի ըլլար հետեւեալը.

«Ո՞վ կը մար ըլլալ պատասխանողը, եթէ ոչ նոյն ինքն ան՝ որ իրքեւ նախագահ, երկրի դեկը իր ձեռքերուն առած ըլլալու մեղաշնորհը ունի...»

ՊԱՏՐԱՍ ԵՆ ԶԳԱԼ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Շարունակում է 2-ին

Նրանց արդիւնաւէտութիւնը, իսկ յետոյ էլ գուցէ ունայ շանսեր կը ձեւաւորուեն որոշակի տեղ ունենալ իշխանութեան գալիք նոր սերնդի շարքում եւ նրա համաձայնութեամբ իրացուել նաեւ որպէս կառավարման ռեսուրս:

Հակառակ դէպքում, Հայաստանում արեւմտեան բեւեռը առաւելագոյնը կը ձեւաւորուի գոտի որպէս անուանական միաւոր՝ հակադէմոկրատիկ ուժերի, բայց նաեւ արագորէն կը լծանայ՝ պետական եւ ազգային ստրատեգիական ինդիքներին ձեւակերպման հարցում անկենսականութեան առումով հետ չմնալով ուժեղացող:

«ԼՐԱԳԻՐ»

ԱՐԱ ԵՄ ԵՍ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲԱԼԱՅԵԱՆ

Շարունակում է 6-ին

զար» ի յաջողութեան եւ յարատեւման համար նա ունի առիւծի բաժին, յատկապէս Մատլի Բաշի նամականին, որն սկսել է լոյս տեսնել 1973ի Դեկտեմբերից թիւ 36:

Ունեմ նաեւ մէկ քոյր: Ամուսնացած է, ապրում է Մ. Նահանգներում, ունի 2 զաւակ եւ 4 թոռ:

Ահա մեր գերդաստանը:

Յովհաննէս Բալայեան

Advertisement for Dr. Missak Ekmekdjian and Dr. Anahid Ekmekdjian, Chiropractors. Includes address: 833 W. Gleneaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065. Text describes their services in English and Armenian.

Advertisement for 'ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԱՍՆԱՃԻԻՂ'. Text describes the organization's goals and contact information: Հեռախոս՝ (626) 351-0695.

ԲԱՐՍԵՂ ԶԱՔԱՐԵԱՆ ԼԵՒՈՆ

Շարունակում է 7-ին

Ծելու, բայց նա իր ներքին հրամայականի մղումով՝ գրեթէ անգէն նետուեց արիւնոտ արկածների դաշտը՝ թոյլ՝ ֆիզիքական կարողութեամբ, բայց ուժեղ՝ իրաւունքի գիտակցութեամբ: Բռնակալութեան գոհարի ձեռքը հնձեց այդ ընտիր ծաղիկը եւս, ընդամէնը 24 տարեկան հասակում... Խեղճ Զաքարեան նա կարող էր մեծ Յեղափոխութեան օրերի լացող Անտրէ Շենիէի պէս բացականչել՝

Հազիւ սկսուած կեանքի ինձոյքին՝

մէկ վայրկեան միայն իմ շրթունքները

Սեղմեցին ձեռքիս բաժակը՝ դեռ լեցուն...»: (15)

Աւետիս Նազարբէկեան եւս, Բ. Զաքարեանի նահատակութեան առիթով «Հնչակ» ի մէջ կը գրէ. «Հայութեան կրթութեամբ ծաղիկ երիտասարդութեան մէջ Զաքարեաններ շատ քիչ կան: Նրա մէջ համոզումների հաստատութիւնը միախառնուած էր զգացումների ջերմութեան հետ, դատողութեան պարզարիւնութիւնը գործելու եռանդի հետ. ընտրած ճանապարհի բոլոր արհաւիրքների գիտակցութիւնը՝ դէպի գործը ունեցած վառվռուն չափազանցութեան հետ: Նա տէր էր մէկ ազնիւ բնավորութեան, ուղղամիտ, լուրջ մտածող, սիրող, մեղմ, անաչառ: Նա յարգուած ու սիրուած էր իր բոլոր ընկերների կողմից: Զարգացած կարգացած ու խելացի իր 22 տարեկան հասակի համեմատ շատ ու շատ աւելի՛ նա հասուն երիտասարդ էր եւ միշտ մեծ ուշադրութեամբ էր յարգուած նրա իւրաքանչիւր կարծիքն ու դատողութիւնը: Ընդունակ կազմակերպող յեղափոխական իմբեքերի, իր զարգացման ու լրջութեան շնորհով նա օրինակելի փրփրականութիւն էր նաեւ ինչպէս ընդունակ վիճաբանող: Նա տաղանդ չէր, բայց նա մէկ ոյժ էր, հասարակական մի կարեւոր ոյժ, որպիսիներ շատ չեն հայ երիտասարդութեան մէջ: Նա մէկ ոյժ էր դրական, հաստատ, ինքնավստահ, տոկոսն, ինքնուրոյն: Հայ երիտասարդութեան լաւագոյն տիպերից մէկն էր նա: Իր միակ մտածումը գործն էր, իր մշտական մտատանջութիւնը կուսակցութեան ներքին գործերի հոգան էր: Իր սեփական անձը նա մոռցած էր, անձնականաւ, առողջութիւն, նիւթական սուղ վիճակ, մինչեւ իսկ համալսարանական ուսումը, որ նա պաշտում էր, բոլորը նրա համար ոչինչ դարձան, երբ նա զգաց իրան պատրաստ եւ ընդունակ ծառայելու հայ ժողովուրդի դատին: Այդ արիւնալից ասպարէզում, այդ ջղալից, վտանգալի գործունէութեան մէջ նա ամփոփուած էր տեսնում իր ձեզոտման արտայայտութիւնը, իր գոյութեան իմաստը, իր հոգու բաղձանքը, աշխատելով ինքն էլ բերել մի քար աչն հասարակական շէնքի կառուցման համար, որ պէտք է մէկ օր իրականացնէ իր պաշտած գաղափարները եւ որի համար մղուած կուռում նրա ճակատը, աւանդ տարածամ կերպով պէտք է պսակուէր նահատակի փշէ պսակով: Մահի մասին ա չէր մտածում, բայց միշտ

սպասում էր նրան, քաջ գիտնալով, որ ազատութեան մեծ, բայց անհաւասար կուռում մահը միշտ ներկայ է... Կառավարութիւնն իր անգոր կատարութեամբ՝ տեսնում էր իր տկարութիւնը յեղափոխականների դիմաց, մանաւանդ երբ Մարգուանի տեղորական դէպքերը յաջողութեան նոյնպիսի գործողութիւններով Ամասիայում եւ ուրիշ տեղերում, որպէս նաեւ մի քանի «վտանգաւոր» յեղափոխականների յաջող փախուստով նոյն կողմերի բանտերից: Կառավարչական սպիտակ տեղորդ խիստ էր, յեղափոխականների վիճակը շատ բարդուած: Այդպիսի հանգամանքներում Զաքարեանի մնալը Մարգուանում այլեւս ծայրայեղ յանդդուութիւն էր, կառավարութիւնը կատարութեամբ փնտռում էր «ֆեսատապաշի (ապստամբապետ) ուսաստանցին»: Ընկերները չէին դադրում գրել նրան հեռանայ Մարգուանից: Անձնուրաց գործիչը խոստանում էր, բայց եւ շարունակում էր մնալ: Իր տարածած մահից մէկ երկու օր առաջ ընկերներին ուղղած նամակում այդ պնդումների նկատմամբ նա գրում է ի միջի այլոց հետեւեալը. «Այժմ կարող եմ ասել, որ վիճակս արդարեւ շատ քրիզիքական է, բայց ասացէք, խնդրեմ, ի՞նչպէս թողնեմ Մարգուանը կրակի մէջ եւ ամենակարեւոր գործեր գրեթէ առկախ: Ես դեռ պէտք է մնամ այստեղ գէթ կարճ ժամանակով, յեղափոխութեան հազարաւոր զինուորներից մէկը չե՞մ արդեօք-իմ տեղս դեռ այստեղ Մարգուան է»: Վեհանձն քաղաքացիական արիւթեամբ շնչող խօսքեր, բայց նա ոչ թէ «հազարներից մէկն» էր, այլ ինքը միակ՝ հազար էր, մի բան, որ իր համեստութեամբ չէր հասկանում»: (16)

- *****
- Մանօրագրութիւն
- 1. «Հայրենիք», 1929 Մայիս, թիւ 7, Մ Վարանդեան, «Ռաֆֆի» Մահուան Քառասնամեակի Առթիւ»:
- 2. «ՎԷՄ», 1938, Յունուար-Մայիս, 2, տարի թիւ 2, Ռ. Պերպերեան, «պատրանքների Շրջանից»:
- 3. «ՎԷՄ», 1938, Նոյ-Յունուար: Նոյն:
- 4. «ՎԷՄ», 1938, Հոկտ.-Դեկտ.:
- 5. «ՎԷՄ», 1938, Յունիս.-Սեպտ.:
- 6. «Հայրենիք», 1928 Մարտ Ռ. Խան Ագաւ «Հայ Յեղափոխականի Յուշերից»:
- 7. «Հայրենիք», 1943, թիւ 1 (234), ԻԱ տարի, Ռուբէն Պերպերեան, «Ի՞նչպէս Հեռացաւ Հնչակեան Կուսակցութիւնից»:
- 8. Արսէն Կիտուր, «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան», Ա. հատոր, Պէյրուս, 1962, էջ 164:
- 9. Նոյն, էջ 169:
- 10. Նոյն, էջ 92:
- 11. Նոյն:
- 12. Նոյն, էջ 86:
- 13. Նոյն, էջ 68:
- 14. «Դրօշակ», 1894 Փետրուար, «Զոհեր»:
- 15. Մ. Վարանդեան, «Վերածնունդ Հայրենիքի եւ Մեր դերը», Ժրել, հրատ. Հ.Յ.Դ.Ի, 1910, էջ 44-46:
- 16. «Յիսնամեան Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան», Փրովիտեան, 1938, Լեռնեց «Բարսեղ Զաքարեան»:

«ԲԱՋ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ
Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30
Կլէնտլի 380-րդ կայանից

ՀԱՅՐ ՕԳՈՍԻՆՈՍ ՎՐԴ. ՍԵՔՈՒԼԵԱՆԻ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՆ

Շարունակուած էջ 8-էն

- ԿՀԳՄ անդամներին համար իրօք առանձնաշնորհ է Հայր Սեքուլեանի մակարդակի հայ դպրութեան անխոնջ ծառային պատուելու նախաձեռնութիւնը ստանձնելը, ասաց նա, ապա հակիրճօրէն ներկայացրեց յարգարժան հիւրի կեանքն ու գործունէութիւնը:

Հայր Սեքուլեանը ծնուել է 1921 թուականին, 1937ին միացել է Վիեննայի Միխիթարեան միաբանութեանը, վարդապետ է ձեռնադրուել 1944ին, հիմնադրել եւ 1961-1962ին խմբագրել է «Հանդէս ամսօրեայ» պարբերականը, որ 1887ին էր հիմնադրուած, 1986ին կազմել է հայագիտական-հանրագիտական բացառիկ արժէք ներկայացնող այս ամսագրի 100-ամեայ մատենագիտութիւնը:

Հայր Սեքուլեանը հեղինակն է Վիեննայի Միխիթարեան միաբանութեան մատենադարանի ձեռագրացուցակի երրորդ հատորի, որը տպագրուել է 1984ին (առաջինը՝ հեղինակ Հայր Տաշեան, տպագրուած է 1895ին, երկրորդը՝ հեղինակ Հայր Ոսկեան, 1964ին): 1811ին հիմնադրուած մատենադարանը հարստացել էր յատկապէս 19րդ դարի 2րդ կէսին, երբ միաբանութիւնը դարձել էր ուսումնասիրական կենտրոն: 1984ի տուեալներով պահպանուած է 2600 ձեռագիր, այդ թուում թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի եւ այլոց ձեռքով նկարագրուած արժէքաւոր մատենաներ:

Հայր Սեքուլեանը մեծ ներդրում ունի նաեւ հայկական դրամագիտութեան ոլորտում, նա ուսումնասիրել-պատրաստել է երեք հատոր՝ «Դրամագիտական Պրպտումներ» խորագրով եւ, վերջապէս, ծանօթ լինելով մի շարք հին լեզուներին՝ եբրայերէն, ասորերէն, հին յունարէն, լատիներէն, գերմաներէն, իտալերէն, իր անգնահատելի ներդրումն է արել նաեւ թարգմանութեան բնագաւառում: Մօտ երեք տասնամեակի անխոնջ աշխատանքով նա աշխարհաբարի է թարգմանել Աստուածաշունչը, որը, ինչպէս որ ցնծութեամբ տեղեկացրեց Պօղոս Գուբելեանը, առաջիկայում պիտի հրատարակուի Պէյրուսի Հայ կաթողիկէ Պատրիարքարանի Մանուէլ Եպս. Պաթաբեանի նախաձեռնութեամբ:

Աւարտելով ասելիքը, Պօղոս Գիւբելեանը մօտեցաւ ու ձերտնազարդ հայ Սեքուլեանին առաջնորդեց դէպի ամպլոն, քանի որ ներկաներն իրենց չդադարող ծափերով գոնէ կարճ մի խօսք էին ակնկալում լսել նրանից:

- Այսքան տարիներին կատարած իմ աշխատանքը եւ Աստուածաշնչի այս թարգմանութիւնը հայ եկեղեցուն ու իմ սիրելի հայրենակիցներին եթէ որոշակի նպաստ է բերել, ես ինքս ինձ բաւարարուած ու երջանիկ պիտի համարեմ: Իսկ համեստ անձս այս յարկի տակ հիւրընկալելու համար շնորհակալութիւն պիտի յայտնեմ Գալիֆորնիայի Հայ Գործընկեր Միութեանը եւ բոլոր ներկաներին:

Երկրորդ բանախօսին ձայն տալուց առաջ երեկոյի հանդիսավարը՝ Շահէ Քէօրօլեանը բեմ հրաւիրեց Անահիտ Իշխանեանին: Յովհաննէս Թումանեանից, Աւետիք Իսահակեանից, Եղիշէ Չարենցից քաղած ստեղծագործութիւնները մէկ փնջի ասմունքով, ինչպէս եւ Նարեկացու

«Հաւուն, հաւուն» տաղի կատարմամբ արուեսագիտուհին գեղագիտական հաճոյք պատճառեց երեկոյի ներկաներին, քնարական երանգ հարդրելով ծրագրի հանդիսաւորութեանը:

Թարմացած դահլիճը պատրաստ էր լսելու յաջորդ բանախօսութիւնը, եւ Շահէ Քէօրօլեանը հրաւիրեց Յովսէփ Նալբանդեանին՝ ներկայացնելու համար «Հայ Տպագրութեան 500 ամեայ պատմութեան ժամանակագրութիւնը» խորագրով մի գեկոյց: Տպագրութեան պատմութեան զարգացման կարճ մի պատկեր տալով՝ արժէքաւորելով հայ գրքի տպագրութիւնը, հայ առաջին տպագրիչ, հայկական տպագրութեան հիմնադիր Յակոբ Մեղապարտին, հայ տպագիր գրքերի պատմութեան եւ մատենագիտութեան առաջին ուսումնասիրողներ Արսէն Ղազիկեանին ու Գարեգին Զարբաշեանին, ապա նշելով, թէ մինչեւ այժմ լոյս է տեսել 140,200 անուն հայերէն տպագիր գիրք, թէ այս թիւը վերջնական չէ, քանի որ Չարդերի, տեղահանութեան, այրուելու, ինչպէս եւ անհոգութեան պատճառներով անհետացել են բազմաթիւ գրքեր, թէ ողջ աշխարհում հայ գրքի ամենահարուստ կենտրոնը Երեւանի Ազգային գրադարանն է, որ ունի 6,5 միլիոն գիրք, նա անցաւ իր բուն նիւթին՝ ներկայացրեց հայ գրքի 500 ամեայ պատմութեան ժամանակագրութիւնը, Չարդարաբար հաւաքագրած եւ ի մի բերած իր աշխատանքը, նշելով, թէ օգտուել էր բազում ու տարբեր աղբիւրներից, նաեւ՝ թէ աշխատանքը ամբողջական չէ:

Ձեռնարկի վերջին բանախօսին էր բանաստեղծ Գէորգ Քրիստինեանը: Նա ներկայացրեց Մեսրոպ Մաշտոցի կեանքը եւ գործունէութիւնը, խօսեց հայկական գրի մաշտոցեան գիւտի մասին՝ ընդգծելով այն անգնահատելի ծառայութիւնը, որ մատուցել էր Մեսրոպ Մաշտոցը ոչ միայն որպէս հայերէնի առաջին ուսուցիչ, այլ նաեւ որպէս հայ մանկավարժութեան առաջամարտիկ, եւ իր խօսքն աւարտեց այն փաստի վերահաստատումով, թէ առանց հայոց գրի գիւտի անհնար պիտի լինէր իրագործել հայ գրքի տպագրութիւնը, անշուշտ, նաեւ՝ հայ թարգմանչաց շարժումը:

Գէորգ Քրիստինեանի խօսքը երեկոյի շողկապ-ամփոփումը եղաւ, քանզի Մեսրոպ Մաշտոցի ստեղծած գրերի եւ առհասարակ նրա կատարած մշակութա-հասարակական գործունէութեան կարեւորագոյն դրսեւորումն էր, որ Հայաստանի տարբեր վայրերում հայալեզու դպրոցներ ստեղծուեցին, որոնք էլ դարձան հայ գրականութեան ու մշակոյթի յետագայ զարգացման, հայ ժողովրդի ինքնութեան պահպանման հիմքը, քանզի Մեսրոպ Մաշտոցի գիւտով ծնունդ առած հայոց դպրութիւնը արագօրէն ծաղկեց որպէս ազգի ու ժողովրդի հոգեւոր անդրի միջոց եւ մանաւանդ որպէս երկրի քաղաքականապէս անջատ մասերը հոգեւոր ու մշակութային գոյութիւն միաւորող եւ հայութեանը ձուլումից պատասպարող ուժ:

Եւ այսպէս, ձեռնարկը հասաւ իր աւարտին: Հետաքրքիր ու զանազան տեղեկութիւններով յագեցած սոյն երեկոյից բաւարարուած ու լցուած, հիւրերն իրենց գոհունակութիւնը նշանակեցին Չարդարեանի ջերմ ծափահարութիւններով ու գալիք նման գրական երեկոների ակնկալիքով հեռացան գրադարանի դահլիճից:

ՀԱՅ ԳՐՔԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 500-ԱՄԵԱԿ

Շարունակուած էջ 16-էն

գիրք կազմելու գործիքները իմ ուշադրութիւնը գրաւեցին...

Մօտենալով տպագրական մեքենային, Տիրացուն ասաց. «- Առաջիկայ օրերին քո աշխատանքը այստեղ է լինելու»: Այդ նշանակում էր ես պէտք է պտտէի թափանիւր, որպէսզի շարժման մէջ դրուէր տպագրական հաստոցը: Իւրաքանչիւր պտոյտ համապատասխանում էր Տիրացուի մէկ թերթի մատակարարմանը, որն իր հերթին անցնելով տառաշարերի վրայով, կատարում էր մէկ էջի տպագրութիւն: Առաջին հայեացքից պարզ թուացող այս գործողութիւնը պահանջում էր իր վարպետութիւնը: Ժամանակ տեւեց, որպէսզի կարողանամ թափանիւր պտոյտների ընթացքը համաձայնեցնեմ տիրացուի ձեռքի շարժումներին:

Երկու շաբաթ յետոյ օգտակար աշխատանք էի կատարում... Միւրտիչ Հայրապետեանն ինձ սովորեցրեց գիրք կազմելու արհեստը: Աշխատանքի հետ համատեղ ինքնամոռաց իմ դասագրքերն էի կազմում:

Վանքի տարածքում է գտնուում Նոր Զուղայի թանգարանը եւ նրան կից մատենադարանը: Տիրացուի հետ այնտեղից մագաղաթներ էինք բերում վերանորոգման համար: Հին ձեռագրերի վերանորոգումները ու վնասուած քների վերականգնումը կատարում էր ինքը Տիրացուն: Միայն երկրորդ տարում ինձ վստահուեց մագաղաթների հետ շփուել: Սովորեցի տառ շարել եւ կարճ տեքստերից էջեր կապել...

Չգիտէի, ասանք որտեղից կարող էի իմանալ, որ այդ տպարանում աշխատել են հայ ազգի գրքի ու տպագրութեան նուիրեալները:


Յետագայում, Հայաստանում ուսումնասութեան տարիներին գրականութեան միջոցով ծանօթացայ իմ հարազատ քաղաքի՝ Նոր Զուղայի ու նրա տպարանի պատմութեանը: Նոր Զուղայի տպարանում աշակերտած ժամանակները խորը ազդեցութիւն ունեցան իմ մտաւոր դաստիարակութեան վրայ, յարգանք դէպի գիրքն ու տպագրութիւնը:

Շատ տարիներ յետոյ, Ստոկհոլմում հրատարակեցի «ԲԱԼԵՆԻ» ամսագիրը, բանասէր Պոկոնդա Մանասերեան-Միրզախանեանի խմբագրութեամբ: «ԲԱԼԵՆԻ»-ին Սկանդինաւեան եւ առհասարակ Եւրոպայում տպագրուող հայատառ թերթերից ու ամսագրերից առաջիններից մէկն էր, որը տպագրուեց «Մակինթոշ» (macintosh) համակարգչի օգնութեամբ: Հայկական տառերի էլեկտրոնային տարբերակը «մակինթոշ» համակարգչի համար ծրագրել է հայ գիտնական, դոկտոր Արի Թոփուզխանեանը: Թերթի տպագրական աշխատանքները կատարելիս, տեսաժապաւէնի նման աչքիս առջեւով անցնում էր Նոր Զուղայի Տպարանը: Իմ ուսուցիչ՝ Միւրտիչ Հայրապետեանի յիշատակը ընդմիշտ մնացել է անմոռաց:

Երկրորդ նկարի մէջ տեսնում էք վարպետին՝ Տիրացուին ու քաղաքի կրօնական երեւելիներին տպագրական հաստոցի մօտ: Ինչպէս երեւում է նկարում, տպագրող մեքենայի ինձ համար շատ սիրելի թափանիւր, որը հազար անգամներ պտտել եմ, փոխարինել են էլեկտրական շարժարեւորով, որով իսկ անխոհեմօրէն արժէքագրել են պատմական արժէք ունեցող ու թանգարանային հարստութիւն՝ տպագրական մեքենան:

VA Print Media
 Book Printing • Hard Covers • Year Books
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
 Հին Գիրքերու Նորոգութեան Համար
 Հեռ.աձայնել՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
 1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
 626-354-5924 • vamedia@yahoo.com

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Ave
 Pasadena, CA 91104
 Գրասենեակները վերանորոգուած
 եւ յարմար վարձքերով
 Հետաքրքրուողներն հեռաձայնել՝ (626) 398-0506

125

**SOCIAL DEMOCRAT
HUNCHAKIAN PARTY
THROUGHOUT
HISTORY**

ACADEMIC CONFERENCE

Dedicated to the
125th Anniversary of the
Social Democratic Hunchakian Party

PARTICIPANTS

- PROF. RICHARD HOVANNISIAN
- PROF. GERARD LIBARIDIAN
- PROF. KEVORK BARDAKJIAN
- PROF. ARA DOSTOURIAN
- PROF. ARA SANJIAN
- PROF. HRATCH TCHILINGIRIAN
- DR. GARABET MOUMDJIAN
- PROF. VAHRAM SHEMMASSIAN
- DR. VARTAN MATIOSSIAN
- REV. DR. ABEL MANOUKIAN
- MR. ARAM ARKUN

CO-SPONSORS

THE RICHARD G. HOVANNISIAN CHAIR
IN MODERN ARMENIAN HISTORY AT THE
UNIVERSITY OF CALIFORNIA
Los Angeles, CA

ARMENIAN RESEARCH CENTER AT THE
UNIVERSITY OF MICHIGAN
Dearborn, MI

WOODBURY UNIVERSITY
Burbank, CA

NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN
STUDIES AND RESEARCH
Belmont, MA

ORGANIZED BY

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION (A.E.B.U.)
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION (N.S.C.A.)

SATURDAY OCTOBER 27, 2012

9:00am - 5:00pm

WOODBURY UNIVERSITY

7500 North Glenoaks Boulevard Burbank, CA

 **LIVEWEBCAST**

for more information please visit our website
or scan with your mobile device

www.sdhp125.org



Seating is limited. Reservation recommended.

email: info@sdhp125.org

1060 N Allen Avenue, Pasadena, CA 91104 Tel.: 626.398.0506

FOLLOWING THE CONFERENCE **Dinner/Discussion with the Academics**
Donation: \$100/person